

11842



070

# ԳԱԿԱԿԵՐ

400



11842

Ա. ՏԱՐԻ

ԿԱՐՄԵՑԻ  
ՐՃԱԿ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ  
ԻԴՐԱՆ ՌԱՇՄԱՋԵԱՆ  
ԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

11879



Խնքանորդյան, վիխաղաժ յօդասժների և ակարմերի արտադպության իրաւումը վերապահուած է:

ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԻՊ

ԵՐԵՒԱՆ  
Տպարան „ԼՈՅՍԻ“, Բէհրուդեան փող. № 12  
1920



Արդիւկը նկարել է ուշ

ա

պայ ս

մ պա, պա պա.



Պապը լսում է թռունիկին


ԱԱ Ա

ս սս, պա պա,

մ մմ պաս.



Պատկերի վրայ նկարած է սար



## Նկարեցիք



Ապրը ծածկւած է ձիւնով

ապր թ

պապ, ասւ պար,  
պար, պա պար,



Տատը դործում է

տատ թ

տատ թա,

տատ, տա

պար պար.



Իսահակը ձռւ ունի

ի

պասի, արի

ափ ափ ար.

տափի, տա պար.


Ո. Եֆեկը նկարում է մատիտով

Յանին Յ

Յա Յի, արի Յի

Յանին տալ

տար պա պին.




Իսահակն ունի կարմիր ձռւ

կար Յիր կ

յաս սիկ, Յի կար

կար Յիր Յանին տար,

Յա Յա ար.




IV լուս պատ

թափառին, արի թի  
լուս պատ.

Լամպա


արակ սի թի

թի թի տամ, տար տա տիս



ու ու  
տա տիս

ու թի ու թի պու ու թի,  
կար թիր կար թիր ու ու թի.







Եւան լաց է լինում

ti u ti  
ti ri u նր  
ti r կու  
ti r կար  
պս րան  
ni նի

ti li u phr u li u li u m պտի րի  
inu կու է



Նուիկը տիկին է խաղում

պար պար սի րուն պար,  
 ուս տիկ, արի լու սի կին տար



Վանին կարդում է

նու նիկ ն  
նա նի,  
մի նա նակ  
ոնոր

վանի  
վւ  
վանին

լու

պար

արաւ

Ես տարաւ կարմիր կաւ

վար բիր, վար բիր իմ մաւ

աս բիս, վար բիր իմ սիրուն

վար տուր ար տու, իմ մաւ




Համեմ կառաւմ է ընկայդ

Է թին է  
Թի էն սէ թին, թի սէ թին,  
ուր էնսանում է թինին


Կա լրուն մու կին ա սաւ,  
սի րուն մու կիկ, պար արի.  
վանին է թի կին ա սաւ, ոռուն  
արի

Վ



Համեմ ընկայդը մեծ է

Սուր բէ նր լուսի կին ա սաւ  
վա, վա, մու կը, մու կը, իմ մու կը  
ոն կաւ պու տու կը,



վարսիկի կատուն.

վարսիկը ուներ

Թի սև կատու.

շատ կտրակրութ

Եր, սիրութ Եր

ընկերի սիբ,

և նիկ Եր ասութ պար պար անութ

վարսիկի սև սիրութիկը սատկա.

և այլին Եր ու ասութ ուր Եիթ  
սիրութիկը, ուր.



Եւայի պարտեզը սիրուն է

զալեն

պարտեզ

ասա

Կ

զանազան

արև, արև, եկ, եկ,


պիկի սարին վերտիկ

պիկի սարք, տես, տես,

պուպուլ է լուսի պիկ



Օնիկը բարձրանում է ծառը



օրօր, օրօր, ի՞լլաս,

երկար օրեր ունենաս.

օրօր, օրօր, արեիկ,

նանի, նանի, սիրունիկ.



Դուրգենը նայում է Օնիկին

Էս դիր զրել դիմում  
Մի նաև մով պիտի զրեմ ուս տիս

-դուրգեն զ  
գաղիկի լու զօնին  
գաղ ու եխ է



Սա օնիկի սան է



ՀԱՅ Ա

ուկանը ուսում է  
ուսի սպաս

սրուտ դորոք

Ո՞ի զրու ընկերում

Է անիւի տակ և վնասում է

ընկեր զրուտերը վրա են վայրում


ու զում են օգնել և ասում են. Էս

անիւին պիտի մի լու տըրորել

կոռը կոռը անել



Թարթեր զանակով հաց է կտրում



Կոսին, կոսիր ուսում՝ նրան սասաւի,

Դանակ դ  
Դանդան մանկիկ  
Դանդան,  
Դանդան կատե՞  
Ոք նաև.


Արա է վայում, դնում՝ է լարդուին  
պողերի վրա, տանում, տային է  
Քոք. մանուկը նոր է սկսում լալ-



Թամարի աչքերը կապած են

քամուր գ

բանակը ասողուն մուս  
 բարեկի պարտէյը և բութ  
 կերաւ բարեկի մես, ասաւ:  
 «բանակ, թէ ուշու՞ եւ բութ ունել  
 եկամաս, ասաւ կեր»  
 քոն արաւ, բարաւ արաւ.  
 դարու արտը լու արաւ



Յուլակն ու Բարեկենը ձի ձի են խաղում

յովակ յ  
 յուրու է, յուրու է.  
 մելիլիները յիրու յան.  
 քու յայիս,  
 զենը յայիս.  
 սիրուն օդուր ական



յովակի ականը.  
 յովակի ասու՞ է. պասաւ, ասու՞

Ես ակնոցի լու են տեսնո՞ւ  
 սիրելի պապա, տուր ակնոց,  
 տեսնե՞մ մաման ո՞ր է դու  
 Թուրապան ո՞ւ թրղը




Բարեկար գայր է ընկել

բարեկն բ

բու բու, բռպրպան,  
 բէկն եկաւ տրվարվան

ես ունի՞մ թէկ բերան,  
 թէկ բերան, ունի բերան.  
 Նրանով պատրում եմ,  
 զրեր կապում, կարդում եմ,  
 լու բաներ ասում եմ



Այ, այ, ես՝ զայր ընկայ, ասում է բարեկար

այ, այ

այսօր մայրիկս

զնայ այդի.

Էս էլ քաղուն վայեցի.

Էս վար ընկա, ասութ բարելիք



Օ, քիթ ցաւում է, ասում է Բարելիք

fhp      f

wfnp


wfnp, wfnp, wfnpինի

կարմիր թիրութ սիրունինի

խնի այդպէս վազվան

բակ ու այդի խնդունեւ

դաշտ դ




Հազարի եղներն ու ոչխարներն արածում են

դաշտը աղա,

նաշտը աղա,

րա մեր աղունը

ով սինի աղա



Ծուշիկն ուսում է խաղող

լուղիկ և

սիրելի լուղիկ

ես մի լեկիկ շնիկ ունիմ լուս լուս

զախրեա՞ տալիս ունելու, որ դա՞մ

եկ թօն, շնիկիս եւ կը քերեա՞մ



Ծուշիկի խաղողը հասած է

սիի, թռու խաղող մի ուսիր, զնարեր  
խոյր, ալան, ու ու դեղին խաղող  
Բայրիկ, որը տամ լուղիկին, որը տամ  
պարիկին, պայտիկին ու վասդենին.

խաղող ի  
խորենիսկ

զարիկ



Զամփել չորացած խաղող է

վիրու զարիկ

լու վասիլիկն

դիրու դրիկ

թիր խասիլիկն

թէկը զալիս թօլի թօն և ասու՞ն

թօլիս, այս կտորը ներկիր այլայէս, որ

ով ու լի թիլի, ով կարմիր, ով դենին,

ով կանաչ և ով կապուտզաւ, ասու՞ն

թօլիսն եռք զամ տանեմ»-արի

այլայիսի օր, որ լինի ով երկուշարքի,


ով երեխարքի, ով լորեխարքի, մի-

խօսքով զարարաւ ով մի օրը

Կրկնողական պատկերներ անցած տառերի սահմանում



Կրկնողական պատկերներ անցած տառերի սահմանում






Զալաւը Ձրում է հորթին

զուր զ

զւալը իհեք յորդին,  
զալաւը դրես զորուն,  
զնաց զաղաց, Բակը աղաց.  
զալին զորին նաևտի զորուն,  
ալուրն եղաւ զոհ իւրոք.  
Քեր զալաւը Քնաց Քոլոք.



Զալաւի հորթը սիրուն է



Ճանճը թռչում է

հոր հ

հոյկը հայում է

հորուի մանդար

հորուր խող ալելիս ուր կորդից  
հորուր զնաց վինոյ դարբնի մօն  
և անաց « ո՞ո, ո՞ուաւէր, ո՞ զիսէիր  
ժո Բանզանի հունար կորդին է, է  
ինչո՞ւ ուիր. »

հուն ժ

մասդեն զի՞ն,  
մեն եռան այն խաղողը ուսում է



ավլոր  
ծի՛, ծի՛,  
ավլորածի՛  
ավլոր դնաց երևան  
բուրդ բուրդ,  
բարձրակ բուրդ,  
շալարաւ,



Սեղանի վրայ կայ մե փունջ;  
ծաղիկ

միտիկ եմ, միտիտիկ եմ  
թօր բերած եմ, հօր պահած եմ,  
այսիկ նաևի խաղորած եմ

շալար չարաւ  
հօն, երևենիկ,  
պատուց եղիկ



1) Ծաղիկը բոյս է.

2) Մանուշակը բոյս է.

բոյս ոյ

պարոյքը յոնց

հետ թիամին

պարունակում

կը ռունում էին.

այս ինչ անուշը բոյս է զայխ.

այդ մանուշակն է հետ տայխ.

ո՞րն է, չոյս ո՞որ այդ ժանիկը,

ինչ ո՞րեց յոնցը պարոյքին.

անունն է մանուշակը,

ժանիկների անուշակը.

այ, այս ինչ յոնց բույսուն կապոյնք,

չոյս ո՞որ պարոյքի յոյք.

ժոյլ թիւմը

թիւմն, դնա, կալսիք


— օդուխս չափում է

թիւմն, եկ մանուկ

կեր.

Ժամացույցը ցոյց է տալիս ժամերը

ժամացույց է



—ուր է ի՞մ թե՛ն  
գդալը



—ևս պահի դողում՝ էր, ժամ զատ  
կէր կարող խեղձին օգնող վայր,  
Թի զու՞ անսաւ, ներս մոռաւ այն-

արզը և ժորժիկը  
ոքք ժորժիկը դուր-  
սոն էր թնացիւ

—անդ Թի արզ կար նաևսաւ, նա լու-  
իին զրկեց, ուսխացրէց ժորժիկը  
ցորեկը զնում էր մուրալու, զիւրը  
դաշին էր, արզի հետ ուրախ վարք  
էնում էր, Թի օք անդ անսաւ լու-  
իին արզի զրկում խեցաց, վերց-  
րէց ժորժիկին, իր թօն պահեց.



Կոռուկները կանգնած են

— կոռուկներ և

կըս կըս կըսկըսան

կոռուկները հա քոան

կոռուկների քի տակ

եկա ամսոն մեր զուան

—  
«քարի լոյս, զարօ զալ»

— այ քարին արևոց, ժամի խէցօ.

«ինչպէս եւ, լու եւ»

— շնորհակալ եւը բայց իւ անու-  
նը զարօ չէ

«ի՞ն էլ խէցօ չէ»



Խելօք վիսիկը նստած է

վիսիկ փ

Թիօ, Թիօ, վիջովիջա-  
-ռի թիատուն եւ,

աղարեղի


— ինչ եւուզում

ի իր ու վամիկ

— ռի թիւ տանում

ի՞մ փոքրերին  
 -որ զողանաս,  
 կը տամ զվիհոյ,  
 սիհլուն, կորի  
 յառակ յ  
 յոդնամ յակորը յունիս, յուլիս  
 ամիներ ին պատկում է յառակի վոյաց  
 սուլիկ յակորը  
 փոքրիկ յակորը զար տղայ էր մի  
 օր յասմիկ քրոջը ձեմենց, ինչն է

վայր ընկաւ յառակին և ճակա-  
 տը պատույ  
 յակոր ճակատը էր ինչ եւ արել  
 «Ըստիկ կանց»  
 դու յո ճակատը ինչպէս կշենիր  
 «արորի վրայ ելոյ և կշենի»



Սեղանի վրայ զբած է ամանով ձու

չեր սեղաւ նիկ



Թի ամսն չու,  
շեր դուակը Թի  
շնորհն չուկ.



Հիմն Եր երկու չի զնացին զուր խմբու  
դեւոր սառած Եր Մէկ օթէկ փորշեցին  
վկարողացան սառոյցը զարդել ճա-  
րախ քուլացել Են Նրանք Յուածե-  
ցին, հնարք զտան. Երկուսով օթէկ  
անդ սառոյցին խփեցին, կոտրեցին,  
կուլու զուր խմբուցին.

Փայտօն Փ  
Փլուան  
դնութ  
Փայտօնութ

Առևնու Փարք վիպում Փուրդոն  
Կանութ

Կրկնողական պատկերներ անցած առաերի սահմանում.



Ա, Բ, Գ, Դ, Ե, Վ, Շ, Ո, Ռ, Ժ, Ի, Հ, Լ, Խ,  
Ճ, Կ, Ջ, Շ, Ը, Ծ, Ջ, Ւ, Ղ, Ն, Վ, Ա, Ա, Ա  
Լ, Ո, Ա, Վ, Ա, Բ, Վ, Ե, Վ, Ֆ, Լ, Ո, Ժ

## VII

Տպագիր փոքրատառեր

Ա ա հ ե

Մ ալ ը մ

Ա ա կ կ

Ի բ ժ լ

ԱԼ ա ԱԼ ու



Կու կու-լի կու,  
պստիկ-մստիկ,  
կարմիր կատար,  
արի, արի,  
կուտիկ տար:

<u>Ա</u>	<u>է</u>	վարդանը ու ոսկանը
<u>Վ</u>	<u>դ</u>	վարդանը գետի մօս ման էր գալիս, մէկ էլ գը- լորւում, ընկնում է գետը. վա, վա, ասում է մանուկը. ոսկանը վազում, վարդանին ազատում է:
<u>Ռ</u>	<u>դ</u>	—
<u>Ո</u>	<u>Ռ</u>	—
<u>Դ</u>	<u>դ</u>	Խաղ
<u>Բ</u>		—բարսեղ, ասա թան. —թան.
<u>Բ</u>	<u>ժ</u>	—երթաս գութան. —ասա թուշ.
<u>Բ</u>	<u>ժ</u>	—թուշ. —ուտես նուշ.
<u>Գ</u>	<u>իւ</u>	—ասա գրիչ. —գրիչ.
<u>Ք</u>	<u>չւ</u>	—ուտես չիր ու չամիչ.
<u>Շ</u>	<u>այ</u>	—ասա ցախ. —խմես քացախ.



Թօթը

1.—ազատեցէք իմ որդուն կրակի բոցերից, լառվ  
կանչում է մայրը.

—ազատեցէք իմ եղբօրը, գոչում էր քոյրը և  
լալիս. յանկարծ մայրն ասում է շանը. բօճ, գնա,  
բեր թորոսին:

2.—շունը վազում, մտնում է այրւող տունը, թու-  
րոսին ազատում, բերում տալիս մօրը. բոլորը  
գովում են բօքին. անվախ շունը նորից վազում,  
մտնում է կրակը. այս անգամ գուրս է բերում մի  
տիկնիկ:


<u>Չ</u>	<u>չ</u>	ջու ջու, ջու ջու, իմ հաւիկներ,
<u>Հ</u>	<u>հ</u>	ճերմակ ճուտեր, հաւ մարիկներ, գուք ճըտճըտան սիրուն ճտեր,

թ

եկէք, կերէք ձեր հատիկներ.  
Ժիր ծովինար, անուշ ժօրժիկ,  
հայկակ, ծերուն, խորէն, ծաղիկ,  
եկէք, տեսէք, մւր են հաւեր:

ժ

ժ



### Մատների վեճը

ճկութ

— այ քուրիկներ  
ջան քուրիկներ,  
ես քաղցած եմ,  
հաց եմ ուզում.

մատանու մատ — որ հաց չունենք,  
որտեղից գտնենք.

միջին մատ — աստւած կը տայ,  
մենք էլ կ'ուտենք.

ցուցամատ — եթէ չտայ,  
ինչպէս ճարենք.

բութ — զողնանք, կ'ուտենք.  
հէնց որ բութն այսպէս ասաց,  
բոլոր քուրերը մէկ տեղ հաւաքւած՝

վրա տւեցին, բութին ծեծեցին,  
այնպէս ծեծեցին, որ այն օրից դէս  
խեղճ բութը մնաց կարճ ու սևերես:

ի

ոյ

ժ

փ

ու

ձ

փ

### աղաև ու գիւղացին

— յարութիւն ապէք, ինչ ես բերել ծախելու.

— ինչ պիտի լինի գիւղացու բերածը, աղա, իւղ, պանիր, ալիւր.  
— քանիսով ես ծախում.

— ինչ ասեմ, աղա, թանգութիւնէ. ալիւրի փութն արժէ եօթն աբասի, իւղի փութը տասնեօթ մանէթ.

— գէ, մի եօթը փութ ալիւր, մի փութ իւղ քաշիր, փուրգօնով ուղարկիր մեր տուն:

### պատիկ հէքիար

հէքիաթ հէքիոթ պապս,  
նաշխուն քուռակ տակս,  
հեծնեմ՝ երթամ երևան,  
խաղող ուտեմ, գիրանամ,  
հաւերիս կուտ բերեմ,  
հաւերս ինձ հաւկիթ տան,  
հաւկիթը տանեմ՝ խառատին տամ,

Խառաստն ինձ շւի տայ,  
 շւին տանեմ՝ հովլին տամ,  
 հովիւն ինձ գառ տայ,  
 գառը տանեմ՝ աստծուն տամ,  
 աստւած ինձ աղբէր տայ.  
 աղբէր, աղբէր, ջան աղբէր,  
 շաքար մաղեմ, կեր, աղբէր:

### VIII

Զեռագիր և տպագիր մեծատառեր

<u>Ա</u>	<u>Ա</u>	Սոսի, Արամ, Պետօ, Տիրան
<u>Ա</u>	<u>Թ</u>	
<u>Ա</u>	<u>Թ</u>	
<u>Ա</u>	<u>Թ</u>	Ասոփ, Արամ, Այետօ, ԷՌիրան շտապում են ուսումնարան:

### Գիրք

Սսա՞ տեսնեմ,  
 իմ սիրուն գիրք,  
 մատաղ կ'անեմ  
 քեզ խաղ ու միրգ.

Ես ինչեր կան  
 ծոցիդ մէջը՝  
 ճատան մուկը,  
 ոսկի ձուկը,

թիթեռ, բգէզ  
 խոկ ծաղկի պէս.  
 բաղն ու պուլիկ,  
 գառն ու ուլիկ,  
 կաքաւ ու լոր,  
 շըլոր սալոր.  
 դէհ, շուտ պատմիր,  
 իմ խելօք գիրք,  
 մատաղ կ'անեմ  
 քեզ խաղ ու միրգ:

<u>Ո</u>	<u>Ո</u>	Իրուքէն
<u>Օ</u>	<u>Օ</u>	Օսիկ, Օսան
<u>Ո</u>	<u>Ո</u>	Ոսկան

Օսանը Իհուքինի և Ոսկանի խոյրն է:

Ո՞վ է եփում թռնրի հացը.      Ո՞վ է պահում գիւղի հօռը.  
 Ո՞վ է կտրում մանկան լացը.      Ո՞վ է քաղում դաշտի խոռը.

թթ թթ

Բաֆֆի

թթ թթ

Բաբկէն, Բագրատ

թթ թթ

Քանաքեռ, Քասախ

### Ոռոգանը

—Օգնեցէք, օգնեցէք, կանչում էր փոսի մէջ  
ընկած կոյր Սահակը, օգնեցէք և ինձ ազատեցէք:

Ոչ ոք ուշը չէր դարձնում: Սահակի ձայնը լսում  
է փոքրիկ Ռուզանը, վազում, կանչում է հայրիկին:

թթ թթ

Իսահակ, Իշխան

թթ թթ

Խաչիկ, Խորէն

թթ թթ

Էմին, Էմիլ

Իսահակ, Բաֆֆի, Եմին, Խաչիկ


### Խողիկը

—Խողիկ, էղ որտեղից:

—Աղայի բակից եմ գալիս:

—Այ ձըղձըղան ծուռ պոչիկ, լաւ լցըիր քո փոքրիկ:

—Ընտէր մնայ էդպէս բակ, կարգ ու կանոն հեչ  
չկար. շատ ման եկայ դէս ու դէն, ուտելու բան  
չգտայ, ամեն տեղ մաքուր էր, աղբակոյտ էլ չգտայ:



եւ

նն

հհ

եւա, երևան

նազիկ, նունէ

չայկ, չրանտ

## Աշուն

1

Աշուն է, նախշուն է:

—Հայրիկ, այսօր ես ու Նազիկը գնացինք այգի.  
 Ինչ սիրուն է, ինչ գեղեցիկ է այնտեղ. կարմիր  
 կարմիր խնձորները, սիրուն փափլիկ գեղձերը, գեղին  
 հոտոտ տանձերը, ալւան-ալւան խաղողները մար-  
 դու խելք են տանում. մենք շատ կերանք, ուրա-  
 խացանք:

—Այո, Նազիկ, այգիները գեղեցիկ են աշնանը.  
 Վաղն էլ գնանք բոստանները:

2

—Այ, այ, ձմերուկ, սեխ, վարունկ... որչափ  
 շատ են գետնի վրայ տարածւած. հայրիկ, տես՝  
 որ մէկն ասեմ:

—Այժմ մտնենք բանջարանոց, ասաց հայրը:

—Նազիկ, մի տես, որչափ կաղամք, գազար,  
 տակ, բողկ են ցանած այս մարգերում. կարտօֆիլն  
 էլ հաւաքում են:

—Հիմա էլ տեսէք, ինչպէս թոշուններից շատ

շատերը շարւէշարան մեր աշխարհից գնում են,  
 տաք երկիրներ թոշում են, ցոյց տւեց նրանց հայրը:

## Աշուն

Արի, աշուն, արի, նաշխուն,  
 Արի ու բեր շատ բարիքներ,  
 Հասած գեղձեր, մեծ մեծ տանձեր,  
 Խնձոր ու նուշ, մրգեր անուշ.  
 Արի, աշուն, արի նաշխուն:

<u>Ժ</u>	ԺՓ	Փօրժիկ
<u>Ճ</u>	ՃԾ	Ծովինար
<u>Բ</u>	ԲԹ	Թոլոս, Թաղոս

Ժօրժիկը պարուժ է, Ժովինարն ու  
 Թորոսը ժափ են տալիս:

ին ինչ է՝

թէ խօսես, կը խօսի.  
եթէ թողնես, կը քնի:  
Թէկուզ ինչ էլ որ լինի,  
Նա յաւիտեան չի մեռնի:

---

հ ձ

Ճանիկ, Ճորոխ

ջ ջ

Ջօնիկ, Ջորագեղ


Զմեու է: Ճանապարհները չիւնով ժամկւել են:

---

### Սուրիկի փիսիկը

— Սիրուն փիսիկ, ապա ասա, ինչ է այստեղ  
նկարած. փիսօն նայեց, հոտ քաշեց, բան չիմացաւ,  
պոչը միայն ծըռմռեց:

— Հը, չիմացար, այ ես ասեմ. սա մի գիրք է, Ես  
բանին էլ պատկեր կ'ասեն, նկարել են ինձ ու քեզ:



Նոյեմբերին

Նոյեմբերին ցուրտ հիւսիսից  
Քամին փկեց զու արաւ,  
Ըներևները բուփ ու ժարից  
Այոկեց, իշեց ու տարաւ:

Իեռուերկրից թերուկ պապին  
Իրէս կըգայ շտապով.  
Կուրտը շալիած, բուքը բերնին,  
Ախպտակ սաւան փուլով:

Են թոշն է՝

Հանելուկ, հանմանելուկ,

Ծէրը ծաղիկ, տակն աւելուկ:

## Չ Մ Ե Ն


Զմեռ է, խիստ ցուրտ է. ձիւն է, ձիւն է ամեն  
տեղ. արևի տակ պսպղում, արծաթի պէս փայլում է։  
Առուներն ու դետերը հաստ սառոյցով ծածկւել են։

— Օյ, օյ, օյ, ինչ ցուրտ է։ Զիլ զիլ քամին  
փշում է. մարդ, կենդանի նրա ձեռքից փախչում  
են, տաք տեղերում պահում են։

— Մայրիկ, այսօր նրշափ լաւ է։

— Իհարկէ, նոր տարի է, թռչոտելով ձայն էր  
տալիս Օնիկը։ Այսօր մենք շատ ուրախ ենք, նոր  
շորեր, նոր գրքեր, խաղալիքներ ու զարդեր ընծայ  
ենք ստացել։ Ստացել ենք մրգեր, բաղցր համեղ  
պտուղներ։

Ինչպէս լաւ է, ինչ ուրախ է, չէ, Աստղիկ։

 մՄ

Մարդարիտ

 յՅ

Յակոբ

~~Ս Ս~~ ցՑ

Ցոլակ

~~Վ Վ~~ կԿ

Կարգոս, Կարէն

Մարգարիտ, Յակոբ, Կարդոս, Կոլակ  
Ակնարին տերեւը

Մրտւմ եմ, Մրտւմ. Շուտ եկ ինչ օգնի,  
Ժանի վրայից Որ ժանից իզնեմ,  
Եթերն է կանզում։ Ախտակու փափուկ  
Բամի զան, Բամի. Վերմակով ժամկւեմ։

## Մատների խաղը

Բութ — Այ, այ, գայլն եկաւ.  
ցուցամատ — Որտեղից եկաւ.  
միջին մատ — Տես, տես, սարից եկաւ.  
մատանու մատ — Փախչենք, երթանք.  
— Վայ, վայ,  
Պստլիկ եմ,  
Զստլիկ եմ,

Չուստեր չունեմ,  
Ի՞նչպէս փախչեմ:



ՎՓ

Փառանձեմ

ՖԹ

Ֆլորա

Ժբառանշեմն ու ֆլորան երգութ են:

ՉՉ

Չամչեան

ԿԿ

Կարել

Չար Չարիկը լալս է:

Ահա հասաւ նոր տարի, Մանր տղայք են ուրախ,  
Հետը բերաւ նոր բարի, Ունին կաղին, գողինաղ,  
Մանր տղոց ուրախ օր, Սալորի չիր, չամիչ, թուզ,  
Բարի զաւակ հօրն ու մօր: Փշատ, ունապ ու ընկոյզ:

Մանր տղայք, չմոռնաք,

Աշխարհումս չէք մենակ.

Ուրիշ շատ խեղճ տղայք կան՝

Աղքատ ու անօդնական:

ՇՇ

Հնոն, Լուսիկ

ԸԸ

Բնձակ

ՇՇ

Շուշանիկ, Շողիկ

Հետնը, Շուշիկը և ընչակը խաղութ են:



## Չին ու ձևադրուկը

Չմեռ էր. ճնճղուկն եկաւ  
խեղճ, անօթի, գոմը մտաւ.  
մտաւ, թռաւ մարի ծայրին,  
սիրուն ծիռն ծիւ ծիւ ասաւ.

—Այս սիրուն ծի, եղիք բարի,  
Չմեռ օր է, մի քիչ գարի,  
իմ բոփ չափ, որ ինձ բաշխես,  
էլի գու միշտ կուշտ կը լինես:  
—Խեղճ ճընճըղուկ, վեր տու ու կեր,  
ինչքան կուզես, ասաց մեր ձին.  
Ունեցածս մեզի համար  
Շատ հերիք է մինչեւ ամառ:

Բանն ով անէ, ես ու դու.

Հայն ով ուտէ, ես ու դու:

Ա Վ

Վարդան, Վահան


Դ Ռ

Դուկաս, Դևոնդ

Գ Ջ

Զալալ, Զաւօ

Վահանը, Դևոնդը և զաւօն կարդում են:



## Ծոյլ Խաչիկը

Խաչիկ, ուսումնարան գնա:

Մայրիկ, գեռ վազ է:

Խաչիկ, դասդ սովորիր:

Օ, գլուխո ցաւում է:

Խաչիկ, եկ, հաց կեր:

Խաղող էլ կը տան, մայրիկ:

Մի օր էլ Խաչիկը գիրքը բաց արաւ, ծառի տակ նստեց,  
ու դաս սովորի: Նայեց, նայեց՝ ոչինչ չսովորեց. Խա-  
չիկի քունը տարաւ:

Մի փոքրիկ այծ մօտեցաւ նրան, պողերով խփեց: Քնած  
աչիկը վեր թռաւ, գոռալով վազեց:  
Տեսար, Խաչիկ, այծն էլ քեզ պատժեց, ասաց մայրիկը:

Դ Ռ

Դաւիթ, Դանէլ

~~Գ~~ գ գ

Գարեգին, Գրիգոր

Դաւիթն ու Գրիգորն ընկերներ են:

### Չմեռայ գալը

Չմեռն եկաւ, ձիւն էր հագին, ձեռն ու ոտը սառն  
սառոց: Ծաղիկ, ծաղկունք ձիւնի տակին, հազար ափս  
ծածկեց չորցուց:

— Ինչու եկար, այ ծեր ձմեռ  
Ու ծածկեցիր դաշտ ու անտառ.

Օրդեօք չինչի, բան ես բերել,

Բան ես բերել դու մեզ համար:

— Միթէ չգիտէք, այ մանուկներ,

Ինչ եմ բերել ես ձեզ համար.

Տաք հագուստներ ու նոր տարի,

Միրգ ու պտուղ, չիր ու չամիչ,

Տաք ու փափուկ ձիւն, որ ձնէ մարդ

Կամ ձնագունդ շինէք, խաղաք.

Լաւ պաղի տաք, կապոյտ դառնաք,

Կարմիր, կապոյտ դուք տուն դառնաք:

— Որ այդպէս է, բարով եկար,

Սիրուն ձմեռ, հազար բարով,

Ծերուկ ձմեռ, դու մեզ համար

Բարով եկար, հազար բարով:

### Չմեռայ գւարձութիւն

1.



— Արամ, տես, ի՞նչպէս ձիւնը  
փափուկ է. Եկ, ձնէ մարդ շինենք,  
ձնագոնդի խաղանք, ասաց բագ-  
րատը:

— Արի, գնանք, կեռնին էլ

կանչենք:

— Կանչենք, կանչենք:

Նրանք գնացին, կեռնին առան, եղան երեք:

Երեքն էլ ձնագունդ շինեցին, փափուկ ձիւնի մէջ զլո-  
րեցին, մեծացրին:

— Բագրատ, տես, իմը որչափ մեծ է, էլ չեմ կարող  
շարժել:

— Ես էլ չեմ կարող:

— Կեռն, եկ օգնիր, ասացին Բագրատն ու Արամը:

Երեքով Արամի գունդը գլորեցին, այնչափ մեծացրին,  
որ տեղից չէր շարժւում:

2.

— Տղէք, ասաց կեռն, ես կը բարձրանամ մեծ գնդի  
վրայ, տւէք ձեր գնդերից մէկը՝ վրան դնեմ, փոր, կուրծք և  
զլուխ շինեմ:

Նրանք տւին:

— Կեռն, առ այս ածուխները, աչքերի տեղը դիր, ասաց  
Արամը: Կեռնն այդ էլ տրաւ:

Քիթը մոռացար, կեռն, քիթը, ասաց Բագրատը:

Զիւն բերին, քիթ շինեցին, մի մեծ փայտ էլ ձեռքը  
տւին:

— Բագրատ, Արամ, այժմ եկէք՝ ձնազնդի շինենք, որ  
նշան առնենք:

— Լաւ, ասացին միւսները և գործի եղան:

— Ես ձեզ առաջնորդ, ասաց Բագրատը. բսան քայլ հեռու, երբ ասեմ մէկ, երկու, երեք՝ միասին խփենք. համաձայն էք:

Հա, հա, շուտ արա.

— Պատրաստւէք, ասաց Բագրատը:

— Մէկ, երկու, երեք: Զնազնդով սկսեցին խփել:

— Ուռա... կանչեց Լեռնը. քիթը թռաւ, քիթը չկայ. որովհետեւ առաջ ես նշան առայ, ուրեմն ես եմ առաջնորդ:

— Լաւ, լաւ, շարունակիր, ասացին միւսները:


— Այժմ զլխին խփենք, ասաւ Լեռնը. մէկ, երկու, երեք:

Զնազնդերը կարկտի նման թափւեցին ձնէ մարդու զլխին:

— Կեցցէ, կեցցէ... ես էլ առաջնորդ, կանչեց Արամը. տեսէք, զլխի կէսը չկայ, ի՞նչ ծիծաղելի դարձաւ:

— Ես էլ առաջնորդ, ես էլ առաջնորդ, բզաւեց Բագրատը այ, զլխի միւս կողմն էլ չկայ:

— Խեղճ ձնէ մարդ, էս ի՞նչ եղար—հա, հա, հա, ասացին մանուկները, կուշտ ծիծաղելով տուն գնացին:



### Չնէ մարդ

Տղէք, տեսէք ձնէ մարդը  
Փայտը ձեռին ահ է տալիս,  
Բայց չի կարող մարդու զարկել:  
— Այ ձնէ մարդ, դու շատ խեղճ ես,  
Փայտ էլ ունես, բայց անճար ես.  
Ոչ կարող ես տեղից ժաժ գալ,  
Ոչ կարող ես խաղալ, ման գալ.  
Սիրուն արե, մի երևար,  
Թէ չէ խեղճը իւղի նման  
Շուտ կը հալչի, ջուր կը դառնայ:

## Գարուն

1.


Ի՞նչ սիրուն է, զեղեցիկ է գարունը։ Սառած երկրին,  
թմրած ծառերին նա կեանք է տալիս։ Նա կեանք է տալիս,  
բոյսեր բուսցնում, ծառեր, ծաղիկներ նախշուն զարդարում։

Գարնան օրերին սար ու ձորեր, դաշտեր ու արտեր  
կանաչ են հագնում։ Միրուն թիթեաներ, ժիր ժիր մեղուներ,  
գոյն գոյն թռչնիկներ ուրախ խաղում են, աշխատում, թըռ-  
չում։

2

Գարնան ժամանակ զիւղացիները դաշտ են գուրս գա-  
լիս, արտերը վարում, հատիկներ ցանում, որ ծլեն, ծաղ-  
կեն, առատ պտուղ տան։

—Իսկ նվ է տեսել կանաչ դաշտի մէջ, սիրուն մարգի  
մէջ ոչխարի հօտեր, ուլեր, գառնուկներ, ինչպէս խաղում  
են, վազում, թռչկոտում, համեղ խոտ ուտում։



## Գարնան գալը

Գարունն եկաւ, գարունն եկաւ;  
Գոզն ու ծոցը ծաղիկներով։

Որտեղ գնաց, գորգեր փռեց  
Հիւսւած հազար վառ գոյներով։  
Որտեղ նա իր ձեռքը դրեց,  
Լցրեց անուշ, ընքուշ հոտով։  
Աղբիւր բղիեց նստած քարից,  
Կաքաւն երգեց՝ անցած սարից։  
Գարունն եկաւ, գարունն եկաւ,  
Գոզն ու ծոցը ծաղիկներով։

## Հրաւեր գարնան

Արի, գարուն,	Անթիւ հաւքեր,
Արի, սիրուն,	Անուշ երգեր,
Արի ու բեր	Գառներ, հովիւ,
Նաշխուն դաշտեր,	Ծաղկունք անթիւ,
Մաքուր առւակ,	Ծառ ու տերև
Պարզ սառնորակ,	Պայծառ արև։

Գարի հաց, թթու թան, պապին  
ուտէ, երրայ գուրան։



## Արտուրիկ

Այս արտուրիկ,  
Այս արտուրիկ,  
Փոքրիկ թռչնիկ,  
Կարմրատուրիկ:  
Արշալուսին  
Դումիւներին  
Բարի լոյս են  
Ճըւճում:

Աիրուն հանդում,  
Կանակ դաշտում  
Արխակի տեղ  
Երգ ասում:



Կորիկ, թմբիկ,  
Հասակս է պստիկ,  
Աչքերս են գեղեցիկ,  
Այտերս են խնձորիկ,  
Բերանս է անուշիկ,  
Մով կայ ինձ պէս սիրունիկ:

## Բալենու հիւրերը

1.

Գարուն է. բալենին նոր է կանաչել, նոր է զարդարւել  
մանր տերևներով: Մէկ մէկի յետեից հիւր են գալիս,  
նայում են բալենուն, ուրախանում են:

2.



Ամենից առաջ բալենուն հիւր են լի-  
նում թրթուրները: Սրանք ազահ, ազահ  
ուտում են նրա փափլիկ տերևները: Անց-  
նում է քիչ ժամանակ, բալենին զուգում  
է սիրունիկ, սպիտակ ծաղիկներով: Այս  
անգամ նրան տեսութեան են գալիս մեղուները, ծաղիկ-  
ներից մեղր են ծծում:

Շարաթներ յետոյ բալենին ծածկում է կարմիր-կար-  
միր պտուղներով: Հիմա ուրախ ուրախ հիւր են գալիս թըռ-  
չուններն ու մանուկները:

## Ծիռն ու տղան

Ծիռիկ թիրիկ, ինչ ես այդպէս  
Թուզում, ծկում, եիկ, եիկ, եիկ:

Աիրուն տղայ, գարուն կը գայ,  
Երգով, ծաղկով անուշիկ:

թուն եմ շինուած պատի ենդում,  
Զագեր հանեմ սիրունիկ:



## Բետիկ Պետիկ

Պետիկը բկլիկ էր: Ինչ տեսնում,  
ուտում էր. մէկ օր, երբ մայրը գոր-  
ծի էր, Պետիկը ծածուկ մտաւ պար-  
տէզ և բարձրացաւ փոքրիկ սալորե-  
նու վրայ: Պետիկը կերաւ, այնքան  
կերաւ խակ սալոր, որ փորը ցաւեց:

Պետիկը լաց եղաւ. մայրը վըայ  
հասաւ, ամեն բան հասկացաւ և բկլիկին դեղեր տւեց: Պե-  
տիկը մի քանի օր հիւանդ պառկեց:

## Եղ մի կարծիր

— Ըխպէր, այ ախպէր, կարծեմ,  
գիւղից ես գալիս:  
— Գիւղից եմ գալիս:  
— Կարծեմ, քաղաք ես գնում:  
— Քաղաք եմ գնում:

Կարծեմ, բեռդ մածուն է:

Մածուն է:

— կարծեմ, էդ մածնից մի քիչ  
ինձ կը տաս:  
— Ինչ կարծում ես՝ կարծիր, էդ  
մի կարծիր, պատասխանեց գիւղացին:

## Աերմիկը


Իոյի թէզ հանգիստ, չթեն ամբողջ ժայիկն է ինեւ  
Զարքնիր, ասային շողերն արևի,  
Զարքնիր, ասային ցողերն անջրեի:  
Ժայիկն էլ զարքեց ասայ.  
Զեկ բարե, անջրե ու արե:

## Մեկ, երկու

Մէկ, երկու, երեք,  
Մէկ ձմերուկ բերեք.  
Չորս, հինգ, վեց,  
Վայ, ձմերուկն ընկաւ

Եօթը, ութը, իննը,  
Ինչ էր նրա գինը.  
Տասը,  
Առեք վասսը:

կոտըւեց.



## Պարտեզու

1.

Փոքրիկ Լուսիկն ու Ցոլակը պարտէզում քաղեցին վարդ, մանուշակ, շոշան և ուրիշ շատ ծաղիկներ:

Նրանք տեսան, որ հայրիկը ծառերը

մէկ մէկ թափ

թրթուրներ:

—Հայրիկ, ինչու ես դրանց վայր թափում, հարցրեց Ցոլակը:

—Եթէ բգեզները, թրթուրները ծառերի վրայ մնան, տերեներն ու պտուղները կուտեն, կը փչացնեն. այն ժամանակ տանձ, խնձոր, սալոր, ծիրան և ուրիշ պտուղներ էլ չենք ունենայ, ասաց հայրը:

2.

Մէկ էլ Լուսիկը ծառի վրայ տեսաւ մի շատ գեղեցիկ թռչնիկ. սուսիկ փուսիկ մօտեցաւ ծառին և ուժով թափուեց, բայց թռչնիկը վայր չընկաւ:

2.

3.

1.

Մուկը մի օր գրքում կարդաց. փիսիկի նման խելօք, աննման ուրիշ կենդանի արդեօք կը լինի.



## Ժիտիկ.

Մեր պարտէզի ճառի եեղում ֆընեղուկը շինեց մի բուն. Այնտեղ ամեց երկու չկիկ, երկու չիտիկ, ժիտիկներն ասին, ժիկ, ժիկ: Մեկ կը սիրեն, անուշ մայրիկ:

## Մկան զարմանքը

Մըտիկը բարի, ինքը ժիր, արի, Մուշտակը քնքուշ, Զայնիկն անուշ:

Մուկը զարմացաւ.—Սուտ է, սուտ, ասաց. փիսիկի պէ  
չար, կուարար ու վատ կենդանի չկայ, այ, մայրիկս վկա



## Նազիկ տատի խաղը

Ծափին ծափին ծիլծիլա,  
Ելէք տեսէք, ով կը գայ.  
Անուշ բալէս տուն կը գայ.  
Մեծ թոնիրը վառեցէք,  
Կարմիր աքլոր մորթեցէք:  
Թոփր, թոփր, թոցնեմ,  
Աքլորի միս կերցնեմ,  
Ծառի հովին ընցնեմ,  
Հօրդ թևին հասցնեմ:

## Էս ես եմ, բա են ո՞վ է

—Կակօ, կակօ, մի ոչխար տար քաղաք, ծախիր, մրալիկների համար չիթ ու միթ բեր:  
—Քաղաքում շատ մարդ կայ, բա որ փոխս ընկնեմ:  
—Այ մարդ, ինչ ես ասում, մարդ էլ փոխս ընկնի:  
—Զէ, ես վախենում եմ. զնա, մի դգում բեր, մէջքիս կապիր, որ ես չփոխւեմ:  
—Թող այդպէս լինի, ասում է կինը և ծիծաղելով և մեծ դգում է կապում կակօի գոտկից:  
Կակօն զնում է:  
—Էղ ուր բարով, կակօ, հարցնում է մէկը:

—Գնում եմ բազար,  
Ոչխարս ծախեմ,  
Երեխոց համար  
Չիթ ու միթ առնեմ:

—Բա էս դդումն ինչնւ ես կապել:  
—Որ փոխս չընկնեմ:

Մարդը տեսնում է, որ կակօն խելքից պակաս է, ուզում է գլխին մի խաղ խաղար. Գնում են զնում, նստում են մի աղբիւրի մօտ, հանգստանում. Քիչ յետոյ կակօի քունը տանում է. Ընկերը սուս-փուս նրա մէջքից դդումը քանդում, իր մէջքին է կապում, ոչխարն էլ առաջը զցած՝ տանում է. Կակօն ընից զարթնելով՝ կանչում է.—Ուր է իմ ոչխարը, ուր է իմ դգումը, ասում ու վազում է. Երբ հեռւից տեսնում է էն մարդուն, ինքն իրեն ասում է.

Հա, իմացայ, էն մարդը որ կայ՝ ես եմ. ես փոխս եմ ընկել. լաւ, որ էն ես եմ, բա ե՞ս ով եմ:

Թէ որ էն մարդը  
Ոչխարը ծախի,  
Երեխոց համար  
Չիթ ու միթ առնի,  
Պարզ է լուսի պէս,  
Որ ես էն մարդն եմ,  
Ես փոխս եմ ընկել:

Եղպէս մտածելով՝ կակօն զնում է. Մարդն էլ ոչխարը բաղարում ծախում է և մտնում է խանութ. —Հիմա հաստատ է, որ ես էն մարդն եմ, ես փոխս եմ ընկել. Լաւ, որ ես էն մարդն եմ, բա ե՞ս ով եմ. Թէ որ էն մարդը

Չիթ ու միթ առնի,  
Ու մեր տուն տանի,  
Պարզ է լուսի պէս,  
Որ ես էն մարդն եմ,  
Ես փոխս եմ ընկել:

Մարդը գնում է, կակօն էլ յետեից. մթնով հասնում են զիւղը: — էլ կասկած չկայ, որ ես փոխւել եմ, էն մարդն ես եմ: Լաւ, ես որ էն մարդն եմ, բա ե՞ս ով եմ, ասում է կակօն ու դուռը ծեծում:

— կնիկ, այ կնիկ, ես փոխս եմ ընկել. էն մեր տուն ե- կողը ես էի. մի ասա, տեսնեմ, էն որ ես էի, բա ե՞ս ով եմ:

Ի՞նչ մարդ, ի՞նչ բան, ասաց կինը ծիծաղելով ու ներս տարաւ մեր կակօխն:



## Մայիսին

Երբ մայիսին ես անցնում եմ Գարուն է, դարուն է,  
Կանաչազարդ անտառով, Տեսէք, ինչպէս սիրուն է.  
Շատ թոշուններ ես տես- Ծաղիկներից ես կապում եմ  
նում եմ Սիրուն փնջեր ինձ համար,  
Այս ու այն կողմ թոշելով: Թիթեռների յետքից ընկած՝  
Ես տեսնում եմ շատ ծա- Ես վազում եմ անդաղար:  
ղիկներ Ուրախ է, գարուն է,  
Անուշ հոտով բիւրելիս, Տեսէք, որչափ սիրուն է.  
Ես տեսնում եմ թիթեռնիկներ Գարուն է, նախշուն է,  
Միշտ վեր ու վար թոշելիս: Ա՛խ, նա որչափ սիրուն է:

## Լաւ ընկեր

Մի փնջի մէջ՝	Էն մեխակից
Մեխակի մօտ,	Առաւ լաւ հոտ,
Ընկաւ վայրի	Եղաւ հոտոտ,
Մի ծաղիկ.	Անուշիկ:


Մենք էլ երեւ լաւ ընկերներ  
Են ծաղկի պէս ունենանք.  
Խելօֆ բարի  
Կը դառնանք:

## Երեք թիթեռնիկ

Բարակ անձրև էր մաղում. Երեք թիթեռնիկ՝  
կարմիր, սպիտակ ու դեղին անձրևի տակ մնացին:



Դէս ու դէն ընկան, մի կակաչ տեսան, մօտեցան  
Նրան, այսպէս խնդրեցին.



— Կակաջ, այ կակաջ,  
թերթիկներդ բաց արա,  
յոգնած ընկերներիս տեղ  
արա: Տես, անձրևը մեզ  
թրջել է, մենք մրսում ենք,  
դողում ենք, մի տեղ չու-  
նինք մտնելու. զէ՞ն, շուտ  
արա, կարմիր կակաջ,  
թերթիկներդ բաց արա:

— Լաւ, կարմիր թիթեռին տեղ կը տամ, իսկ  
դեղին, սպիտակ թիթեռին չեմ տայ:

— Իմ ընկերներիցս ես չեմ բաժանւի, ասաց կար-  
միր թիթեռը. աւելի լաւ է՝ մէկտեղ մնանք, մէկտեղ  
թրջւենք, մէկտեղ մեռնենք, քան թէ ես մենակ,  
անընկեր ապրեմ:

Երեք թիթեռը հեռացան, խոտերի մէջ տեսան  
մի շուշան. մօտեցան նրան, այսպէս խնդրեցին.

— Շուշան, այ շուշան, թերթիկներդ բաց արա,  
յոգնած ընկերներիս տեղ արա: Տես, անձրևը մեզ  
թրջել է, մենք մրսում ենք, դողում ենք, մի տեղ  
չունինք մտնելու. զէ՞ն, շուտ արա, սպիտակ շուշան:

— Լաւ, սպիտակ թիթեռին տեղ կը տամ, իսկ  
դեղին, կարմիր թիթեռին չեմ տայ:

— Իմ ընկերներից ես չեմ բաժանւի, ասաց սպի-  
տակ թիթեռը. աւելի լաւ է՝ մէկ-  
տեղ մնանք, մէկտեղ թրջւենք, մէկտեղ մեռնենք,  
քան թէ ես մենակ, անընկեր ապրեմ:

տեղ թրջւենք, մէկտեղ  
մեռնենք, քան թէ ես մե-  
նակ, անընկեր ապրեմ:

Երեք թիթեռնորից հե-  
ռացան, այս անգամ նրանք  
տեսան մինարդիզ, մօտե-  
ցան նրան, այսպէս խընդ-  
րեցին.

— Նարդիզ, այ նարդիզ,  
թերթիկներդ բաց արա,  
յոգնած ընկերներիս տեղ  
արա: Տես, անձրևը մեզ  
թրջել է, մենք մրսում



ենք, դողում ենք, մի տեղ չու-  
նինք մտնելու. զէ՞ն, շուտարա,  
դեղին նարդիզ, թերթիկներդ  
բաց արա:

Լաւ, դեղին թիթեռին տեղ  
կը տամ, իսկ կարմիր, սպի-  
տակ թիթեռին չեմ տայ:

Իմ ընկերներից ես չեմ բա-  
ժանւի, ասաց դեղին թիթեռը. աւելի լաւ է՝ մէկ-  
տեղ մնանք, մէկտեղ թրջւենք, մէկտեղ մեռնենք,  
քան թէ ես մենակ, անընկեր ապրեմ:

Արևը վերևից ամեն բան տեսաւ, տեսաւ ու լը-  
սեց, երեք ընկերի սէրը հաւանեց. ամպերը քշեց,

անձրևը ցրեց, երեք ընկերին նա տաքացրեց ու չուրացրեց:

յատուտիկ, պուտպուտիկ,  
թերեւ թոփկ թիթեռնիկ,  
ես իմ թեռվ ժափ կը տամ,  
ժաղկէ ժաղիկ պար կը գամ



### Երկու բացեր

Հային այգում  
Խաղ անելիս

Յանկարծ թիւում  
Ինչ է տեսնում.



Երկու սուր բան.  
—Գազմն, գազմն,  
Վայ, մայրիկ ջան,  
Սա ինձ կուտի,  
Եկ, ազատիր:  
Բայց ինչ գազան—  
Նապաստակ էր,  
Որ տղային  
Որսորդ կարծել,  
Թփի միջին  
Վախից տապել,

Ցից էր արել  
Իր ականջներ:  
Մէկ էլ յանկարծ  
Խիստ վախեցած  
Մէկը մէկից  
Պոկ են գալիս,  
Խլշիկն անտառ,  
Հայկը դէպ տուն  
Լեզապատառ  
Ոնց են գախչում...



### Արտուտի բունը

1.

—Հայրիկ, այսօր արտի մէջ մի բուն տեսանք. Նրա մէջ  
երեք փոքրիկ ձու կար:

—Ես էլ տեսայ, ասաց Նուշիկը:

—Հայրիկ, բնի մօտ տեսանք մի արտուտիկ. Նա շարու-  
նակ թռչկուում էր, ճըլլում, մենք սուսիկ փուսիկ արտի  
մէջ կանգնեցինք. մէկ էլ արտուտիկն եկաւ, իջաւ, բունը



մտաւ, ձւիկների վրայ նստեց, ձայնը կտրեց։ Ասա, հայրիկ,  
ինչու համար նա նստեց, ինչու այդպէս ձայնը կտրեց։

2

Հայրիկն ասաց.  
— Արտուտիկը ձւի վրայ  
պէտք է նստի, տաքացնի, որ  
այնտեղից փոքրիկ ձագեր, սի-  
րուն ձագեր դուրս գան։ Մայ-  
րը նրանց համար որդ է բերում, կերակրում, որ ձագերը  
շուտ մեծանան, թիեր առնեն, մօր հետ թոշեն, ուրախա-  
նան։



## Աղան ու մշակը

Աղան դրկեց մշակին,  
Որ երթայ, արտը քաղէ։  
Նա էլ պառկեց ծառի հովին,  
Ասաց. թող գայ, ինքը քաղէ։

Աղան դրկեց մեծ շանը,  
Որ երթայ, նրան խածէ,  
Որ ելնի, արտը քաղէ։  
Նա էլ պառկեց ծառի հովին,  
Ասաց. թող գայ, ինքը խածէ։

Աղան դրկեց սև կատւին,  
Որ երթայ, շանը ճանկէ,  
Որ ելնի, մշակին խածէ,  
Որ ելնի, արտը քաղէ։  
Նա էլ պառկեց ծառի հովին,  
Ասաց. թող գայ, ինքը ճանկէ։

Աղան եկաւ, կատւին ծեծեց,  
Կատուն ելաւ, շանը ճանկեց,  
Շունը ելաւ, մշակին կծեց,  
Մշակն ելաւ, արտը քաղեց։



## Ծիծեռնակի բունը

1

Ծիծեռնակը ծըլւըլալով ե-  
կաւ, հասաւ մեր երկիրը.  
Ծիծեռնակն ուրախ ուրախ  
ամեն կողմ թռչկոտեց, անցած տարւայ բունը գտաւ, կար-  
կատեց. բուրդ ու մամուռ, փափուկ չոր խոտ բունը բե-

րեց, հաւաքեց, փափլիկ տաք տեղ պատրաստեց:

Մի օր էլ ընի մէջ մի ձնձուկ տեսաւ: «Սիրուն ձընձուկ, այդ իմ բունն է, դուրս եկ ընից»:

— Ի՞նչ ես ասում, այս լաւ ընից դուրս չեմ գալ. գնա, զլխիդ ճարը տես:

2

Ծիծեռնակը որչափ խնդրեց, աղաչեց, ձնձուկը շլսեց. տխուր-տխուր գնաց, ընկերներին պատմեց: Ծիծեռնակները խումբ եկան, ձնձուկին խնդրեցին, բայց ձնձուկը շլսեց:

— Ծիկ, ծիկ, ծիկ, ասաց մի ծիծեռնակ. պէտք է պատժել, պէտք է պատժել չար թռչունին:

— Ծիկ, ծիկ, ծիկ, ասացին միւս ծիծեռնակները. պէտք է պատժել, պէտք է պատժել չար ձնձուկին:

Նրանք թռան... Քիչ յետոյ հարիւրաւոր ծիծեռնակներցեխ, կաւ կտուցներն առած՝ եկան, ընի անցքը ծածկեցին, ձնձուկին պատժեցին:

Ծիծեռնակ, Ծիծեռնակ,

դու գարնան սիրուն թռվնակ.

Դէսի ուրի ինչ ասս,

թռվում ես այդպէս արագ:

## Ծիտիկները

Հայրիկ, ասա, ի՞նչպէս բռնեմ,

ի՞նչպէս բռնեմ ծիտիկները,

Սիրուն, փոքրիկ ծիտիկները:

— Հեղտ է, տղաս, մի բուռ հող առ, Յանիր նրանց պոչիկներին, Դու կը բռնես ծիտիկներին:

Փոքրիկ Հայկը մի բուռ հող Վերցրեց, ցանեց պոչիկներին, Որ շուտ բռնէ ծիտիկներին:

Թեին տւին, թռվոալով Թռան բարձր ծառի ծայրին Փոքրիկ սիրուն ծիտիկները:

Հայրիկ, տես, տես, թռան նրանք, Ասա, ի՞նչպէս, ի՞նչպէս բռնեմ Սիրուն փոքրիկ ծիտիկներին:

— Հիմա նրանց դու հանգիստ թող, Քեզնից նրանք շատ խելօք են՝ Փոքրիկ, սիրուն ծիտիկները:



## Զանկո Պանկո

1  
Լինում է չփ լինում, մի այծ է լինում. այս այծն ու-

նենում է երկու փոքրիկ սիրուն ուլիկ, մէկի անունը Զանկ-  
լո, միւսինը Պանկլո:

Մայրն ամեն օր գնում, արածում, ուլիկների համար  
կաթ էր պատրաստում:

—Մայրիկ, մեզ էլ տար անտառ. մենք էլ ուզում ենք  
արածել, ծաղիկներ ուտել, սառը ջուր խմել, ասացին ու-  
լիկները:

—Դուք փոքր էք, պատասխանեց մայրը. մի քիչ էլ  
տանը մնացէք, մի փոքր էլ մեծացէք, յետոյ կը տանեմ:

—Որ այդպէս է, մեզ համար փափուկ խոտ և սառը  
շուր բեր անտառից:

—Չատ լաւ, ասաց մայրը. նա ամեն օր Զանկլո Պանկ-  
լոի համար խոտ, սառը ջուր և անուշ կաթ էր բերում:

Ամեն օր անտառ գնալիս՝ մայրն ասում էր. —Զանկլո,  
Պանկլո ուլիկներ, դուռը փակ պահեցէք, թէ չէ՝ չար գայլը  
կը գայ և ձեզ կը տանի:

Երբ մայրը տուն է վերադառնում, պոզերով դուռը  
ծեծում էր, բարակ ձայնով երգում և ասում էր:

Զանկլո, Այանկլո ուլիկներ,

իմսիրունիկ բալիկներ,

նկէյ, դուռը բաց արէյ,

Կերէյ, խմբէյ, կլուսցէյ:

Ես ձեզ համար լի ու լի  
կաթ եմ բերել իւղալի,

Խոտ եմ բերել հիւթալի,  
Զուր եմ բերել աղբիւրի:

Զանկլօն ու Պանկլօն վազում, դուռը բաց էին անում,  
կաթը ծծում, խոտն ուտում, ջուրը խմում, կշտանում էին.

2.

Մի գայլ այս բանը տեսնում է. նա մտածում է ուլիկ-  
ներին ուտել: Մի օր, երբ այծը տանը չի լինում, մօտենում  
է տնակին, դուռը ծեծում և երգելով ասում է.

Զանկլո, Պանկլո ուլիկներ,  
իմ սիրունիկ բալիկներ,  
եկէք, դուռը բաց արէք,  
կերէք, խմէք, կշտացէք:  
Ես ձեզ համար լիուլի  
կաթ եմ բերել իւղալի,  
Խոտ եմ բերել հիւթալի,  
Զուր եմ բերել աղբիւրի:

—Դու մեր մայրը չես, մեր մայրը բարակ ձայն ունի,  
քո ձայնը հաստ է, ասացին ուլիկները:

Քիչ յետոյ գայլը նորից մօտեցաւ այծի տնակին: Այս  
անգամ բարակ ձայնով երգեց, որ դուռը բանան:

—Մեր մօր ոտները սպիտակ են, քո ոտները սև են, դու  
մեր մայրը չես, դուռը բաց չենք անի:

Գայլը վազեց, գնաց ջրաղաց, ոտներն ալիւրով սպիտա-  
կացրեց, կրկին եկաւ, դուռը ծեծեց և շատ բարակ ձայնով  
երգեց, որ դուռը բաց անեն:

Այս անգամ Զանկլօն ու Պանկլօն դուռը բաց արին,  
բայց երբ գայլին տեսան, շատ շատ վախեցան: Գայլը եր-  
կուսին էլ կուլ տւեց, գնաց:

Մայրը տուն դարձաւ. երբ նա տնակի գուռն բաց տեսաւ, սաստիկ վախեցաւ, դէսու դէն ընկաւ, շատ ման եկաւ, ուլիկներին չգտաւ:

— Ոյն գայլն է ուլիկներիս խարել ու տարել. պէտք է չար գայլին պատժեմ, պէտք է ուլիկներիս ազատեմ.

Այծը մտածեց, մտածեց, հնարը գտաւ. նա մի աման սեր առաւ, մի աման մածուն, գնաց դարբնի մօտ և ասաց:

— Դարբն, այ դարբն, ես քեզ համար սեր ու մածուն եմ բերել. ի՞նչ կը լինի՝ իմ

պողերը լաւ սրես, որ չար գայլի հետ կուեն, Զանկլօ,

Պանկլօ ուլիկներիս ազատեմ:

Դարբինն այծի պողերը գանակի պէս լաւ սրեց.

Այծը գնաց, գայլի տան կտուրը քանդեց:

Գայլը բարկացած կանչեց. — Ո՞վ է իմ կտուրը քանդում:

— Ես եմ քանդում, ասաց այծը. ասած տեսնեմ, դու ես տարել իմ Զանկլօին, դու ես տարել իմ Պանկլօին, թէ որ քաջ ես, դուրս եկ, կուենք:



Ես եմ տարել — կերել քո Զանկլօին ու Պանկլօին, ես

գուրս կը գամ կուելու, ասաց գայլը:

Նրանք կուեցին. այծը սուր սուր պողերով խփեց, գայլի փորը պատռեց. Գայլը վայր ընկաւ, Զանկլօն ու Պանկլօն ուրախ ուրախ գուրս թռան:



## Մկնիկ աղան

Երկարապոչ մկնիկ աղան ուզեց ընկեր գտնել իրան:

Հագաւ իր նոր շապիկը, չուխան, ելաւ բռնեց վերի ճամբան: Գնաց, գնաց, հասաւ մի մեծ ճահճի: Էս ճահճի մօտ մի կանաչ գորտ կոկուալով երգ էր ասում:

Մկնիկ աղան հաւնեց սրան, բարե տւաւ, բարե առաւ, բարակ ճայնով նրան ասաւ.

— Ե՞յ սիրունիկ,  
Հաստիկ տոտիկ,  
Նախշուն գորտիկ,

Արի, անեմ քեզ ինձ հարսիկ:

Գորտը ասաց. — Զէ, պստիկ, երկարպոչիկ, աղա մկնիկ, ես չեմ դառնայ քեզի հարսիկ:

Մկնիկ աղան շատ էր հաւնել խանում գորտին ու զոտւաւ ճարտար լեզւին.

—Ահա աշուն,  
Դու էլ անտուն.  
Զիւնը կը գայ  
Քուլայքուլայ,

Թուք ու բորան,  
Խանում կրոռան,  
Բա դու մեղք չե՞ս,  
Ինչու սառչես:

Խանում —խաթուն գորտը կրոռան, որ միտ բերաւ  
ցուրտը ձմբան, նրան ասաւ.

—Մկնիկ աղա,  
Ասենք՝ եկայ.  
Տուն, տեղ ունե՞ս,  
Որ կը տանես:  
—Լաւ ու համեղ  
Ճանճ ու մժեղ,  
Շորեր պէս պէս  
Դու կը բերե՞ս:

—Բա չե՞մ բերի  
Տունս կոկիկ  
Հազար բարիք.  
Մէջը լեցուն,  
Խանում խաթուն  
Նստիր ու կեր:

## 2.

Մկնիկ փեսան տլոպ-տլոպ, հարսը կոռան շլոփ-շլոփ  
Եկան, եկան, նորափեսի տունը հասան: Եստեղ կարգին  
հարսնիք արին. աշուղները սազ ու տաղով հարս ու փեսի  
գովքն արին ու եօֆն օր, եօթը գիշեր մկնիկ աղին հարս-  
նիք արին: Շատ օր չանցած մկնիկ փեսան հարսին ասաւ.

—Հարևանի  
Որդին ունի  
Էս օր հարսնիք.

Խանում գորտիկ,  
Ես կը գնամ,  
Շուտ կը դառնամ:

Մի օր, երկու, երեք անցաւ, մկնիկ աղան տուն չդար-  
ձաւ: Հարսն էլ դարձաւ իլ ձահիձը, սրտի ցաւից նա երգ  
կապեց, տխուր ձայնով այսպէս երգեց.

—Էս աշխարհում  
Չեմ հաւատում  
Ես ընկերի:

Մկնիկ փեսայ,  
Բա աշխարհի  
Օրէնք է սա:

Էս որ լսեց մկնիկ աղան, իսկոյն գնաց գորտի մօտը,  
ինչքան խնդրեց, լեզու թափեց, գորտը նրան հէջ չլսեց: Եւ  
մկնիկը տխուր, տրտում վերադարձաւ մենակ իր բան:


## Փոքրիկը


—Մայրիկ, մայրիկ, ինձ ասա, —Դու երկնքից ցած թուար,  
Ես լոնչպէս աշխարհ եկայ: —Թոար ու գիրկս ընկար:

Մօր երեսին բարկացեստ  
Նայեց փոքրիկն ու ասաւ.  
—Եթէ թեեր ունէի,  
Ափսոս չէր որ կտրեցիր:

## Կառապան

—Կառապան, այ կառապան,  
Հագել ես կարմիր կապան,  
Կառքիդ ինչ ես լծել դու:  
—Երկու շնիկ, մի կատու:  
—Մւր ես վազում ջրի նման.  
—Դէպի, դէպի երեան,  
Խաղող ուտեմ, գիրանսամ:





## Հպարտ աքլորը

Բակում մի օր  
Երկու աքլոր  
Կերի համար կռւեցին,  
Իրար փետուր,  
Կատար բմբուլ  
Արնոտեցին, զգեցին:  
Մէկը վերջում  
Յաղթւած տրտում  
Փախաւ, գոմում թագնւեց.  
Մէկն էլ ուրախ,  
Հպարտ, անվախ  
Ելաւ կտուրն ու ձայնեց.  
—կի...կի...լի...կիի...

Այս աշխարհըի  
Հաւքերի մէջ ինձ նման  
—Ով կայ տեսնեմ...  
Ես իշխան եմ  
Անվախ, անյաղթ աննման:  
Հարևանի քաջ, անւանի,  
Մեծ աքլորին յաղթեցի,  
Բմբուլն ալւան,  
Յարդի նման,  
Քամու բերան տւեցի.  
Կի...կի...լի...կիի...  
Այս միջոցին հսկայ մի ցին  
Նրան տեսաւ, ոլացաւ,

Մագիլները լայն բացած,  
Աւ աքլորին՝ քաջ իշխանին  
Ճանկերի մէջ տարաւ վեր,  
Զագուկներին արաւ կեր:



## Պոչատ կաչաղակը

1.

Լինում է չի լինում, մի պառաւ տատիկ է լինում. տատիկը մի այծ է ունենում. նա ամեն օր կթում, թոռնիկներին կերակրում էր. Մի օր էլ կաթը դրեց ծառի տակը, ինըը գնաց փայտ բերելու, որ կերակուր պատրստէ:

Այս բանը կաչաղակը տեսաւ. նա թռաւ կանգնեց ամանի վրայ ու կաթը թափեց. Պառաւը բարկացաւ, ձեռքի փայտով խփեց կաչաղակին, պոչը կտրեց:

2.

Կաչաղակն թռաւ կանգնեց ծառին ու ասաց.

— Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ կցմցեմ, պոշս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ:

Պառաւն ասաց. — Գնա, կաթս բեր, որ պոչդ տամ:

Կաչաղակը թուաւ, գնաց կովի մօտ և ասաց.

— Կովիկ, կովիկ, կաթ տուր, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը իմ պոչս տայ, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ:

Կովն ասաց.

— Գնա, ինձ համար խոտ բեր, որ բեզ կաթ տամ:

Կաչաղակը թուաւ, գնաց արտի մօտ և ասաց:

— Արտ, արտ, ինձ խոտ տուր, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ:

Արտն ասաց. — Գնա, ինձ համար ջուր բեր:

Կաչաղակը թուաւ, գնաց ջրբաշխի մօտ և ասաց.

— Ջրբաշխ, ջրբաշխ, ինձ ջուր տուր, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ:

Ջրբաշխն ասաց. — Գնա, ինձ համար բահ բեր:

Կաչաղաղակը, թուաւ, գնաց դարրինի մօտ և ասաց.

— Դարրին, դարրին, ինձ բահ տուր, բահը տանեմ ջրբաշխին, ջրբաշխն ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին, կովն ինձ կաթ տամ, կաթը տարաւ պառաւին, պառաւը նրան պոշը տւեց. կցեց կցմցեց, պոչը սաղացրեց, գնաց ընկերներին հասաւ:

Կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ կաչաղակն եկաւ:

Դարրինն ասաց. — Գնա, ինձ համար ձու բեր:

Կաչաղակը թուաւ, գնաց հաւի մօտ և ասաց.

— Հաւիկ, հաւիկ, ինձ ձու տուր, ձուն տանեմ դարրին տամ, դարրինն ինձ բահ տայ, բահը տանեմ ջրբաշխին, ջրբաշխն ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ:

Հաւը խղճաց նրան, մի ձու տւեց:

Կաչաղակը շատ ուրախացաւ. ձուն տարաւ դարրին, դարրինը նրան բահ տւեց. բահը տարաւ ջրբաշխին, ջրբաշխը նրան ջուր տւեց. ջուրը տարաւ արտին, արտը նրան խոտ տւեց. խոտը տարաւ կովին, կովը նրան կաթ տւեց. կաթը տարաւ պառաւին, պառաւը նրան պոշը տւեց. կցեց կցմցեց, պոչը սաղացրեց, գնաց ընկերներին հասաւ.

## Ամառ

Շոգ է, ամեն տեղ կրակ է թափւում. մարդիկ, կենդանիներ փախչում, մտնում են հով տեղեր:

Այգիների մէջ հասնում են տեսակ տեսակ բաղցը, համեղ ծիրաններ, կարմրաթշիկ կեռասներ, տանձեր, ինձոր-


ներ և ուրիշ պտուղներ։ Բոստաններում հասնում են ձմերուկներ, սեխեր, վարունկներ և շատ տեսակ բանջարներ։

Արտերում դեղնում, հասնում են ցորեն, գարի, հաճար և ուրիշ հացահատիկներ։ Գիւղացին շատ ուրախ է, գուրս է գալիս դաշտը, արիւն քրտինք է թափում, հունձ է անում, բարդ բարդում, մեծ սայլերով կալը քերում, ծեծում և ձմեռայ պաշար է պատրաստում։

## Աւան

Սաստիկ շոգ է, ցորեն գարի հասել են,  
Հնձողները խոտը քաղել գիզել են,  
Բոլոր ծառերը ծածկւել են տերեսով,  
Պտուղները ճիթ են անում ժամալով։

Ամբառ է, ամբառ է,  
Արել իիստ կը վարէ։




## Չմրուխտ եղնակ

«Չմրուխտ եղնակ, ոսկի եղնակ,  
Չարկիր, խաղանք միասին»։  
—Ի՞նչպէս խաղանք, սիրուն հարսիկ,  
Ճաշ ես տանում Մինասին։  
«Մինասը թող իր հունձն անի,  
Չառ թեերդ գու զարկիր։  
Եղնակն օդում խաղ է անում,  
Հարսի գլխով պարտուում։  
Հարսն ուզում է նրան ըռնել,  
Տի-նի-նի-նի վազվզում։  
Օրը մթնեց, հնձւոր Մինաս  
Սոված մնաց գաշտումը.  
Խեղճ երեխան լացից ճաքեց,  
Խմորը քացխեց տաշտումը։

## Արագիլի սէրը

Արագիլի բունը տան կտուրին էր։ Նրա ընի մէջ կային երկու փոքրիկ ձաղ։ Նրանք նոր էին փորձեր անում, որ թոչեն։ Մի օր էլ տունը կրակ ընկաւ։ Հրդեհը շատ մեծացաւ, չկարողացան հանգցնել։ Արագիլը շատ վախեցաւ, վեր ու վար թուաւ, օգնութիւն



ցերը վերև բարձրացան, արագիլն իւր ձագերի հետ միասին այրւեց:

## Չղջիկ

1

—Բարե ձեզ, թռչուններ, ես ուզում եմ ձեզ հետ ապրել, ասաց չղջիկը:

—Դու նվ ես, ասաց մի թռչնիկ:

—Դու մեղնից չես, ասաց, մի ուրիշը:

—Ար ձեզանից չեմ, ապա ի՞նչու ձեզ պէս թռչում եմ, ասաց չղջիկը:

—Թռչնիկները զարմացան:

—Նա մեղնից է, ասաց մէկը:

—Նա մեղնից չէ, պնդեց միւսը:

Թռչնիկների մէջ կոիւ ընկաւ:



կանչեց: Քանի քանի անգամ փորձեց ձագերին բերանն առնել, բնից փախցնել, կրակից ազատել:

Այս բանը նրան չը-  
յաջողւեց ու չյաջող-  
ւեց:

Երբ տեսաւ, որ էլ ձար չկայ, թևերը փռեց ձագերի վրայ, ուզեց պաշտպանել Կրակի բո-

Մի խելօք ծիւ էլ չղջիկին ասաց.

—Եթէ ուզում ես մեզ հետ ապրել, պէտք էն ու րկ տաս:  
Չղջիկը բարկացաւ, հեռացաւ, գնաց:

2

Այս անգամ չղջիկը գնաց մկների մօտ և ասաց:

Բարե ձեզ, քոյրիկներ, ես ուզում եմ ձեզ հետ ապրել:

—Դու նվ ես, հարցրեց մի մուկ:

Գու մեղնից չես, ասաց



մի ուրիշը:

—Ար ձեզնից չեմ, ապա

ինչու ձեզ նման քիթ ու բերան ունիմ, ասաց չղջիկը:

—Նա մեղնից է, ասաց մէկը:

—Նա մեղնից չէ, պնդեց միւսը:

Մկների մէջ կոիւ ընկաւ:

Մի մուկ էլ չղջիկին ասաց:

—Եթէ ուզում ես մեզ հետ ապրել, պէտք է հարկ տաս:

Չղջիկը բարկացաւ, հեռացաւ, գնաց:

3

Այն օրից զէսը մութ քարերի մէջ, ծառերի ճեղքում նա մենակ ապրեց, նա մենակ ապրեց, որ էլ հարկ չտայ: Նա ցերեկները քնում է, գիշերները գուրս գալիս, իր համար որս ճարում:

Էն բնչն է՝

Թեեր ունի, փետուր չունի,  
Բայց թռչում է, ինչպէս թռչուն.  
Կտուց չունի թռչնի պէս,  
Բերան ունի մկի պէս:

---

## Պատիկն ու լիտիկը

Դաշտի մուկը հսկայ ու չաղ,  
Ագին երկար, ինքը դօշաղ,  
Մօտենալով մի օր մի տան,  
Տեսաւ վտիտ, պստիկ մկան.  
«Պահ, քո տունը Սստւած շինի,  
Եղպէս պստիկ մուկ կը լինի...»  
Եղբան նիհար, հալից ընկած,  
Ըշխարհումս լեռ չի եղած»:  
— Հարուստ տան մէջ, տաք ամբարում  
Թագաւորի կեանք ես վարում,  
Ուտում ես միշտ կարագ ու եղ,  
Կըծում շաքար ու նուշ համեղ:  
Իսկ ես խոպան, ցուրտ դաշտերում  
Հազիւ հազ եմ ապրուստ ճարում.  
Բայց տես, քեզնից մեծ եմ, հսկայ,  
Ինձ պէս լիտիկ՝ էլ մուկ չկայ...»-

, Մի պարծենար, իմ աչքի լիս,  
Մէկ նայիր թէ ով է գալիս»:  
Նայեց էն կողմ դաշտի մուկը,  
Տեսաւ կատւին, ցամքեց թուքը:  
Պստիկ մուկն իսկոյն փախաւ,  
Իր նեղ բնում շուտ թաք կացաւ.  
Ջատ աշխատեց լիտիկ մուկն էլ,  
Բայց չկարաց ծակը մտնել:  
Կատուն եկաւ կաղլիկ-կաղլիկ,  
Բոնեց դաշտի մկան չաղլիկ:  
«Բաջի, կանչեց տան մկնիկը,  
Պստիկն է լաւ, թէ լիտիկը...»

---

## Երեխաներն անտառում

1.

Ի՞նչ կայ դպրոցում, անտառում լաւ է, գնանք,  
այնտեղ խաղանք, տանձ ու խնձոր քաղենք, ասաց  
մի աշակերտ իր երկու ընկերներին:  
Գնանք, գնանք, ասացին միւսները և երեքով  
միասին գնացին անտառ:  
— Սիրուն բզէզներ, ճանձեր, եկէք՝ խաղանք, ա-  
սացին մանուկները:

—Մենք շտապում ենք, յայտնեցին ճահճերը:

—Մենք էլ ազատ չենք, ասացին բգեղները:

Աշուն է. տաք տեղ ենք փնտռում, որ մենք  
չմրսենք, իսկ մեր ձւերը ցրտից չսառչեն:

Մանուկները գնացին. ծառերի միջից մի ձայն  
լսեցին:

—Բարեւ քեզ, բարեւ, սիրելի թռչնիկ. երգիր  
մեղ համար. եկ ներքե, խաղանք:

—Ես շատ գործ ունիմ, ժամանակ չունիմ:

2.

Երեխաները գնացին. գնացին, գնացին, մի խումբ  
մըջիւններ տեսան:

—Փոքրիկ մըջիւններ, եկէք, թիշ խաղանք:

Զէք տեսնում, ձմեռուայ համար պաշար ենք հա-  
ւաքում, ասացին մըջիւնները:



Մանուկները քիչ էլ գնա-  
ցին, ծառերի վրայ սկիւռներ  
տեսան:

—Փոքրիկ ոկիւռներ, ներ-  
քե եկէք, մի փոքր խաղանք:

—Զէք տեսնում, որ մենք  
պաշար ենք հաւաքում, ձմեռ-

ւայ համար կերակուր պատրաստում:

—Եկէք, տղէք, առւակի հետ խաղանք:

—Ժամանակ չունիմ ձեզ հետ խաղալու. բոյսեր,  
ծառ ու ծաղիկներ ինձ են սպասում: Ինձ են սպա-  
սում այծ ու ոչխարներ, գառներ, ուլիկներ, որ ա-  
նուշ ջրիցս խմեն, զովանան:

Մանուկները զարմացան, թէ ինչու ոչ ոք չի  
ուզում իրենց հետ խաղալ:

Յանկարձ՝ ծառերի միջից մի փոքրիկ կկուրարձը  
կանչեց.՝ կռւ-կռւ, կռւ-կռւ.



Ես փոքրիկ եմ, բայց ծոյլ չեմ,  
Ամեն օր էլ աշխատում եմ  
Եւ միշտ ուրախ խաղում եմ:

Ներկայ թանկութեան և տեխնիկական անյարմարութեան պատճառով  
այս հրատարակութիւնն ևս մեր ցանկութեան հակառակ լոյս է տեսնում  
առանց գունաւոր պատկերների:

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Զնայելով Դասընկերն իր լոյս տեսած օրից (1909թ.) մամուլում և  
ժողովշերում խիստ և երբեմն միակողմանի քննադատութեան ենթարկեց.  
Հնայած նրա առաջարկած նորութիւնների մասին ոչ ոք ըստ էութեան  
չխօսեց ու չներքեց և ոմանց կարծիքով դրանք աւելորդ նորութիւններ հա-  
մարտեցին, բայց և այնպէս Դասընկերի կազմողները հիմնելով գիտութեան  
և իրենց տարիների փորձերի վրայ՝ անշեղ կերպով իրենց առաջարկները  
առաջ տարան և հետպհետէ լրացրին:

Դասընկերի գործածողները տարիների ընթացքում գործնականի մէջ  
համոզւեցին, որ մեր առաջարկները (չորս գծի փոխարէն մի գիծ գործառ  
ծել, թեք գրութեան տեղ ընդունել ուղղահայեաց, բոլոր այբբենը ձեռագրով  
տանել, ձեռագրից գիտակցական արտագրութիւնը ճանաչել որպէս ամենա-  
լաւ միջոց ուղղագրութեան, մեծ ու փոքր տառերը առանձին առանձին անցնել  
և այլն) խոկապէս գիտական և գործնական հիմունքներ ունեն և մեր բունած  
ճանապարհը ուղիղ է ու նպատակայարմար:

Դրան ապացոյց կարող են լինել Դասընկերի տարի տարածւելը  
և այն նոր գասագրքերը, որոնք Դասընկերի լոյս տեսնելուց մի քանի տարի  
յետոյ հրապարակ եկան, ինչպէս «Մեր Դպրոցը» և «Կայծեր»:

Այդ կողմից Կայծերի կազմողները այնչափ առաջ են գնացել, որ ոչ  
միայն Դասընկերին հետեւել և նրա սիստեմից օգտւել են, այլ և առանց  
յայտնիութեամբ ընդօրինակել են Դասընկերի մանր և մեծատառ  
ձեռագրերը: Պէտք է կայծերի կազմողներն ի նկատի ունենային, որ այդ  
տառերն առանց փորձերի ու նիւթեական զոհողութեան առաջ չեն եկել, ուս-  
տի և այդ վարմունքի համար յայտնում ենք մեր զարմանքն ու բողոքը:

## ՀԱՄԱՐԾՈՅ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ, ԳՈՐԾԱԴՐՈՂՆԵՐԻՆ

(Վերջաբան Ա. տպագրութեան 1909թ.)

I. Արդէն էքսպէրիմենտալ մանկավարժութիւնը բազմաթիւ փորձերով  
ապացուցել է, որ ձեռագրից արտագրելն երկու անգամ պակաս սխալներ է  
տալիս, քան տպագրից արտագրելը: Հոգեբանօրէն նոյնպէս ապաց ուցւած է,  
որ ձեռագրով գրել կարդալ սովորեցնելն անհամեմատ աւելի արագ և յաջող  
արդիւնք է տալիս, քան տպագրով: Այստեղ մանուկն իր բնական հակում-  
ների համաձայն նախ գրում, ապա գրածը կարդում է: Մանուկը գործ ու-  
նենալով միմիայն մի բանի (ձեռագրի) հետ, նրա հոգու մէջ արագ զուգորդ-  
ւած է, դրա համար նա աւելի շուտ ըմբռնում է, հեշտութեամբ վարժուած,  
առաջ է գնում, քան երբ նրան ձեռագրի հետ միասին տալիս են տպագիրը+  
ձեռագիրը որչափ էլ նման լինի տպագրին, այնուամենայնիւ չի կարելի  
միացած տանել, որովհետեւ մանկանը գիւտարութիւն՝ է պատճառում, իսկ երբ  
սրա հետ միացած են տանում ձեռագիր և տպագիր գիւտարութիւն՝ խնդիրն  
անհամեմատ աւելի ու աւելի բարդանում է: Այստեղ մանկան հոգին ոչ թէ  
միայն տառի մի ձերի հետ զործ ունի, այլ չորս—(ձեռագիր, տպագիր մանր  
տառեր և մեծատառ ձեռագիր ու տպագիր)—ձերի, որոնք իրարուց բաւա-  
կան խիստ տարբեր լինելով, մատադ հոգու համարանմարս են մնում և իրա-  
ցումն չի կարող լինել: Զայմանալի հակասութիւն է տիրում մեր մէջ: Եւ-  
ըստական և ամերիկական շատ երկրներում, որտեղմանուկն երեքտարիմանկա-  
պարտէզ յաճախելով անագինմտապաշտ, մտքի վարժութիւն, ըմբռնողութեան  
ընդունակութիւն է ձեռք բերում և այս ամենից յետոյ պահանջ են զնում  
դպրոց մանող մանկան Ա. տարում գրել կարդալ չովորեցնել, այլ դարձեալ  
զգայարանները վարժեցնել և միայն Բ. տարրւանից սկսել, —նոյն իսկ, ամենա-  
խղճուկ ընտանիքի յարկի տակից գուրս եկած, Ա. տարում ոչ միայն գրել  
կարդալ են սովորեցնում, այլ և խիստ գիւտարին պահանջներ դնում՝ միաժա-  
նակ ամեն մի տառ սովորելու համար պահանջելով չորս ձև: Այսպիսի  
հակասութիւն: Իւրաքանչիւր գիտող գասատու բազմաթիւ փորձերով կարող  
է տեսնել, որ այդպիսի զէպքերում մանուկները գրելիս շատ անգամ մեծ ու  
փոքր տառերը շփոթում են միմիանց հետ և գրել-կարդալու գործը դանդա-  
ղեցնում, գիւտարացնում են: Տպագիր և ձեռագիր փոքր ու մեծ տառելն իս-

րար հետ անցնելիս մանուկների ուշադրութիւնը ցրւում է, նրանք չեն կարող կենդրոնանալ ոչ մէկի վրայ և զրահամար թէ գրելը, թէ ուղղագրութիւնը և թէ կարդալը տուժում է: Այս ինչ՝ երբ նրանք սկզբում միայն ձեռագրի հետ գործ ունենան, այն ժամանակ մի քանով զբաղվելով, ամբողջ ուշագրութիւնը կենդրոնացնում են ձեռագիր գրել-կարդալու վրայ, դրանով մանուկներն ոչ միայն լաւ գրելու վարժութիւն են, ձեռք բերում, այլև գրածն արագ ըմբռնելու և կարդալու:

Այս հիման վրայ մեր դասագրքով մանուկները պէտք է գրելով կարդալ ոովորեն և ձեռագիր տառերի վարժութիւնները վերջանալուց յետոյ, նոր անցնեն տպագիր և սրանից յետոյ էլ գլխագրերը: Աւելորդ ենք համարում սրա վրայ երկոր կանգնել, քանի որ էքսպէրիմենտալ մանկավարժութիւնը բազմաթիւ փորձերով այդ ցոյց է տւել:

11. Վելոյիշեալ բացատրութեան հիման վրայ՝ մեր ձեռագիր տառերը սովորական ընդունւած ձեից տարրերում են, ա.) մեր ընդունած ձեռագիր տառերը տպագրին շատ նման են, որպէսզի տպագիրն անցնելիս ոչ մի գժւարութիւն առաջ չգայ, միայն մի քանի ձեռագիր (ձ, հ, ք,) տպագրից տարրերում են, որոնց վարժութիւններին մենք շատ տեղ ենք տւել, բ.) արդէն բնախօսական էքսպէրիմենտները ցոյց են տւել, որ երբ տառերը մազագծերով իրար հետ միացնում են, մանկան լաւ չկազմակերպւած և թոյլ մկանունքները բաւական արագ յոզնում են. այն ինչ վայրկենական ընդհատումներն որոշ հանգստութիւն տալով՝ յոզնածութիւն չեն առաջանում: Միւս կողմից մազականներով վերջացած և կից գրութիւնը մանուկների դիս անվարժ աչքի համար միանգամից ընդգրկելը և ըմբռնելը բաւական դժւար է: Փորձերը ցոյց են տւել, որ նոյն դժւարութիւններին են հանդիպում նաև հասակաւոր անգրագիտները, Այս հիման վրայ մենք խուսափել ենք տառերը մազագծերով վերջացնել և կից գրել: Մեր ընդունած գրութեան ձեր մանուկների տիսողութեան համար շատ պարզ է, միանգամից ըմբռնելի և կարդալու համար հեշտ. գ.) մեր տառերի ձեն ապագայ գեղեցիկ և տրագ զրութեան պարզ ձեն է: Այս գրութիւնով առաջնորդւորդները յեսագայում կարիք չեն ունենայ ոչ մի մազագիծ գուրս ձգելու, ինչպէս այդ տեղի է ունինում, եւր տառերը մազագծերով են վերջանում: Երբ մանուկների ձեռքերը գրութեան վարժութիւն, երբ նրանք մտաւորապէս աւելի տոկուն են դառնում, այն ժամանակ նոր պէտք է անցնեն կից և ալագ գրութեան, իսկ այդպիսի դէմքում, մեր գրութիւնով տուաջնորդւորդ-

ները տւելացնելու են միայն մազագծերը:

111. Զեռագիր և տպագիր փաքը ու մեծ տառերը սովորեցնելիս աշխատել ենք պարզից բարդ, հեշտից գժւարն անցնել: Սրանով տառերի մասնը մէկը միւսին հիմք են ծառայել և գործը հեշտացը երբեմն այդ սկզբունքից շեղւել ենք բովանդակութեան կապն ի նկատի ունենալու՛: մի բան՝ որ տառերի կուպակցութեան և հեշտ սովորելուն պակաս չի ցուստում: Դարձեալ հեշտութեան համար փոքրատասերից բաժանել ենք ձառգիր և տպագիր զիստատաները և ընթերցարանում հետզհետէ, ասուր ճանական կարգով առաջ բերել: Սրանով մի կողմից փոքրատասերի անցնելը համեմատաբար դիւրացրել ենք, իսկ մեծատառերի անցնելը շատ թեթևացը ել: Այս ձեռով մանուկները մեծատառերը կը գրեն այն ժամանակի, երբ արդէն փոքրատասերն առցած են, որոնց շնորհիւ թէ նրանց աչքը և թէ ձեռքը վալ ժաւած են:

114. Մանկաբանութիւնը (педологիա) գրականապէս ապացուցել է, որ մանուկները նկարել սիրում են և իրաքանչիւրն աշխատում է իր երիայած իրը կամ կենդանին նկարել: Այս պատճառով՝ որպէս ձեռքի վարելիք եւ գրութեան նախապատրաստիւն ընտրել ենք պարզ զծերից լազմած շրջապատ առարկաների նկարները: Մանուկներն աւսուցչի առարկութեամբ պէտք է գրքից կամ դասարանի գրատախտակից իրենց ոետրակների վրայ արտանկարեն (տես 1 աստիճան): Նպատակայարմար է իրանգամից գրչով, միզգանի տետրակի վրայ նկարել, քան մատիւսով միանի գծի կամ քառակուսիների վրայ:

Փորձերը ցոյց են տւել, որ 4, 3 կամ 2 գիծը ոչ միայն գրութեանը իւրութիւն չեն պատճառում (ինչպէս կարծում են), այլ այդ գծերի մէջ տառերի տեղը որոշելը բաւական դժւարութիւն է առաջ բերում: Այդ գծերը մանուկների աչքերին և ձեռքերին ենթագրած համաչափութիւնը նոյնպէս են տալիս և նրանց ինքնուրոյն աշխատանքը կաշկանդում, կապում են: Եղանակը երբ մանուկները 4 գծեր անցնում են մէկին, նրանք աւելի գժւարութիւնների են պատճառում, քան միանգամից մի գծի վրելիս: Մի իծը տառերին ուղղութիւն է տալիս, իսկ նրանց համաչափութիւնը մասնակներն իրենք են կամաց կամաց ձեռք բերում և վարժում: Այս ձեւն անց գծի ուղիղ եւ համաչափ գրութեան նախնելու ամենակարև եւ դրական անապարհն է:

Գրութեան ձեն ուղղահայեաց ենք վերցրել, ի նկատի ունենալով հե-

տեհալի. ա) մանուկներն ինքնուրոյն գրելիս աւելի ուղղահայեաց են գրում, քան թեք. իւրաքանչիւր գիտող սրանում կարող է փորձով համոզւել. բ) թեք գրութիւնն առողջապահական տեսակէտով վնասակար է, որովհետեւ նա պատճառում է ողնաշարի ծոռւթիւն, կրծքի, ստամոքսի ճնշումն և այլն. Այդ բաներն արդէն գպոց սկան առողջապահութիւնն ու բնախօսութիւնը հաստատել են, այն ինչ ուղղահայեաց գրութիւնն այդ պակասութիւններից աղատէ. գ) ընդունելով ուղղահայեաց գրութիւն, զասատաւները պէտք է ինկատի ունենան մասուների առանձնայատէութիւնները. ոչ մի դէպքում չպէտք է ճնշեն նըանց ինքնուրոյն գրութիւնն ձեւ, որը կարող է ընդունեածից թեք շեղումներ ներկայացնել:

Վ. Ի՞նչպէս սկսել մեր գասագրքով պարապել. Առաջին օրերում պէտք է կարճ խօսակցութիւն ունենալ գասարանի և առարկաների մասին, ապա զրուցատրութեան նիւթ գարձնել մար գասագրքի «Զանկլօ-Պանկլօ», «Պոչատկաչաղակ», «Մկնիկ աղան», «Երեք թիթեռնիկ», «Երեխաները անտառում» յօդւածները: \*)

Որպէսզի գասերը միակողմանի և ձանձրալի չլինեն և միաժամանակ մանուկները գրութեան մէջ վարժեն, պէտք է իւրաքանչիւր զասում երկու տեսակ զրագունք լինի. մի մասը բանաւոր, միւսը գրաւոր. Այս կերպ որոշ ժամանակ պատմութիւններ և գրաւոր վարժութիւններ անցնելուց յետոյ պատմութիւնների տեղ՝ այժմ գասերի մի մասը տղւելու է վերլուշ ժական և համագրական վարժութիւններին, այսինքն իրենց անցած հերթաթները, պատմութիւնները կամ ոտանաւորները վերածել խօսքերի (նախադասութիւնների), բասերի, վանկերի (կտոր) և հնչիւնների (երկար և կարճ ձայնների), ապա հնչիւնները համարելով, կազմել վանկեր, բառեր և խօսքեր, իսկ գասերի միւս մասը նւիրել գրաւոր վարժութիւնների շարունակութեանը. Այսպէս ուրեմն բանաւոր նախապատրաստութեան հետ զուգընթացար առաջ է գնում գրաւորը և բանաւորի հետ միասին կը վերջանաւոր նախավարժութիւնները՝ տառերի հիմնական էլեմէնտների հետ: Այդ էլեմէնտներով կարելի է բալոր տառերը կազմել:

ՎI. Այս բոլորից յետոյ բանալ գրքի 3-րդ երեսը. այսուեղ նկարած է

\*) Անան, ձմրան և գարնան յօդւածները պատմելիս անհրաժեշտ է գրտնց մասին շափելի գաղափարներ տալ. զրա համար պէտք է մանուկներին դասութանց դուրս տանել և ամեն ինչ դորձնականապէս ցոյց տալ. Սրանով նըանք զնողական պարզ գաղափար կունենան և յօդւածներն աշցնելիս նըանց վրայ երկար կանգնելու առանձին կարեք չելին:

մի սկսեակ. նրա մէջ կայ բազմոց, սեղան, վառարան, փնջով ծաղիկ, ժամացոյց, պատկեր և ալլն. Մանուկներն ընտանիքի անդամների անուններն են տալիս, սրա համար ուսուցչի հարցերին պէտք է պատասխանեն, որ «Ճայրիկը հաց է կտրում, Արփիկը նկարել է ուլ, Խառնակը կարմիր ձուն ձեռքին ուրախ կանգնած է, Էմինը նստած ընկուզ է կոտրում, տառը կարում է, Վանին պատի համար կարգում է, պապը լսում է, Նունիկը տիկնիկ է խաղում, պատից կախած է ժամացոյց, պատկեր—պատկերի վրայ նկարած է սար, առաստաղից կախած է լամպա, սեղանի վրայ կայ մի փունջ ծաղիկ, ցերեկ է, հայրը տանը չէ»:

Այս ամենը մանուկները պէտք է պատկերին նալիկով լաւ պատմել իմանան, որվհետեւ սրանից էլ օրինակելի նախագասութիւններ (խօսք) և բառեր են ընտրւած:

Գրքի 13-րդ երեսում կայ երկրորդ ընդհանուր պատկերը «Աշակերտները զպրոցի պարտէզում խաղալին». սա նոյնպէս լաւ ծանօթ է երեխաներին, ինչպէս և ընտանիքի պատկերը. Ահա այդ պատկերը նախապէս աշակերտները պէտք է ուսուցչի զեկավարութեամբ լաւ պատմել իմանան, ինչպէս օրինակ—ա) Աշակերտները դպրոցի պարտէզում խաղում են. բ) Դպրոցի պարտէզը միծ է. գ) Թամարի աշքերը կապած են, մանուկները աչքակապուկի են խաղում. դ) Եւայի զնդակը ընկել է ծասփ վրայ, եւան լալիս է. ե) Վարժապետի կարգադրութեամբ Օնիկը բարձրանում է ծառը. զ) Անգախ Օնիկը ուսները պինդ զրած զգուշութեամբ բարձրանում է. կ) Գուրգէնը կանգնած նայում է Օնիկին:

Այս բոլորը պատմելուց յետոյ աշակերտները միւս երեսներում տեսնում են նոյն պատկերի մասերը միծ զիրքով նկարած, որով խսկոյն վերաբերում են, թէ ով ինչ է անում և գուրս են բերում օրինակելի բառեր. այսպէս օրինակ, պարտէզ բառից՝ զ) Թամարից՝ թ. Եւայից՝ ե. Օնիկից՝ օ. Ռամից՝ ո. և այլն:

VII. Դասագրքի 12, 32—33և 48-րդ երեսներում դրւած են «Կրկնութական պատկերները անցած տառերի շրջանում»:

Աշակերտները որոշ տառեր անցնելուց յետոյ ուսուցչի զեկավարութեամբ պէտք է գիտեն այդ պատկերները և պատմեն: Այսպէս օրինակ, Ի. պատկերին նայելով կը պատմեն նրանք՝ ա) Արաղազը կանչում է կուշուռի-կուռ, բ) Կատուն մշաւում է, գ) Վանին կարցում է, զապը լսում է. զ) Սրամը գրել է ի. ե) Արամը լալիս է. զ) Արամը նկարել է տուն. է) Պատկերի վրայ նկարած է սար:

Առաջին պատկերից գրում են կու կու, կրկնում է կ տառը, կատուն մլաւում է, գրում են մլաւում է, կրկնում է մ, և տառերը. Արամը գրել է ի, գրում են լալիս է, կրկնում է լ, ի. գրում են տուն, գրկնում էստ սար:

Այսպէս էլ նախ պատմում և ապա գրում են Ա. պատկերի հետեւալ բառերը, —սագը կանչում է զա, զա, զ տառը. ը) տղան քշում է բարդիկին, բ տառ. գ) շունը հաջում է, շ տառը. դ) ոչխարը մայում է, ո, չ տառեր. ե) կատուն խաղում է գնդակի հետ, գրում են խաղում և գլուխակ, իս, գ տառեր. զ) Ա՛յ, այ, ես վայր ընկայ, առում է Զաւէնը, գրում են այ, այ, կրկնում է այ. է) Զաւէնը քնել է, ք տառ. ը) Զաւէն, ես հմ նրա կարել այս պատկերը, գրում են Զաւէն և ես, զ, և տառեր. թ) զու ես նըշ կարել այդ պատկերը, գրում են զու և այդ, կրկնում է դ տառը. ժ) նկարած է ցորենի հասկ, գրում են ցորեն, ց տառ. ժայ) Թորոսիկը քնել է օրորոցում, գրում են Թորոսիկ ու օրորոց, թ, օ տառեր:

Նոյնպէս էլ կրկնողական ԱԱ պատկեր. նախ դիտում և ապա պատմում են. ա) էշը զում է, ո, ը) կովը բառաչում է, գրում են կով. գ) փոքրիկ տղան ձի է նստել, գրում են փոքրիկ և ձի, փ, ձ տառեր. դ) Զաւիկը կերակրում է աղաւնիներին, գրում են Զաւիկ, կրկնում է ջ. ե) բաղը. ճուտիկները, աբաղը, հաւը և ծիտիկները վագում են կուտ ուտելու, գշում են՝ ճուտ, ծիտ, հաւ, կրկնում են ճ, ծ, տ տառեր. զ) ժամացոյցը կախւած է պատից, զըրում են ժամացոյց, ժ, ոյ.

Թէև ամեն մի յօդւածում նոր տառ անցնելիս սովորած բոլոր տառերը կրկնում են, բայց և այնպէս կրկնողական պատկերներն աշակերտներին մի նորութիւն, մի թարմութիւն և գեղարեւստական ճաշակի զարգացումն են տալիս. Նրանք այժմ ոչ թէ միայն գրածը պէտք է կարգան, այլ նախադասութիւններ կազմեն, գրեն և կարգան: Բնական է, որ այս երեսյթը պէտք է զիտողութիւնը զարգացնէ, հետաքրքրութիւն առաջ բերէ, որով մանուկները բոլոր անցածները մի տեսակ խաղ ու խնդումով կը կրկնեն: Միւս կոզմից կրկնողական պատկերները յետամնաց և թոյլ յիշողութիւն ունեցող աշակերտներին մի անգամ ևս առիթ կը տան կրկնելու, անցածները վերարտագրելու և պակասները լրացնելու:

ԱԱԵՆ կերպ աշխատել ենք խուսափել օրինակելի բառերի համար ընտրել զանազան կենդանիների, գործիքների և այլ առարկաների անուններ: Սրանցից շատերը մանուկներին կամ անձանօթ են և բացատրութիւնների կարօտ և կամ առարկաների անունները գաւառաբառներում տարբեր լինելու պատճառով նորութիւն են ներկայացնում. իսկ անձանօթ կամ նոր սովորած բառի հետ կապել մի նոր բառ՝ դա շատ զժւար կը լինի: Այսաեղ մանուկները երկու դժւար զործ պէտք է կատարեն, նախ, անձա-

նօթ բառի նշանակութիւնը պէտք է հասկանան, յիշողութեան մէջ պահեն և ապա սրա հետ պէտք է մի նոր բառ կապեն. իսկ եթէ օրինակելի իրը ծանօթ է, պէտք է աշխատեն գրական լիզով գործածող նոր անունը միտքը պահել և դրա հետ կապել նոր սովորելիք տառը:

Երկու գէպքումն էլ մանկան ուղեղի համար ձանրաբեռնութիւն է առաջ գալիս, որովհետև բաղմաթիւ անձանօթ բառեր, առարկաներ և տառեր նրա յիշողութեան մէջ կուտակելով, բնականաբար նա պէտք է ձանձրանայ, նրա յիշողութիւնը թուլանայ, նրանցից շատերը նսեմանան և մոռացւեն Այսպիսի երեսյթների առաջն առնելու համար մնում է կրկնել, միշտ կրկնել, որ նրանք յիշեն. սրանով էլ շատ անգամ մանուկները անգիր են անում առանց տառը լաւ ճանաչելու և իրը հասկանալու: Ուրիշ պատճառների հետ միասին պէտք է նաև սրան վերագրել այն երեսյթը, որ բոլոր այբուբենն անցնելուց յետոյ շատերը այս կամ այն տառը մոռացած են լինում և կամ չեն կարողանում զրել:

Այս հիման վրայ՝ մեր դասագրում օրինակելի բառերի մեծ մասը մանկան սովորած ընտանիքի և աշակերտները դպրոցի բակում պատկերներից են վեր տռած, մի մասն էլ մանկան շատ ձանօթ շրջապատից, որոշ պլոտկերներ տարբեր ձեերով կրկնում են, որոնցից օրինակելի բառեր են գուրս բերում. այսպէս ուրեմն կապակցաբար առաջ գնալով թէ անցած տառերն են վերանորոգւում և թէ նորերն աւելի լաւ են կապւում ու տպառուում: Ուրիմս մեր դասագրքավ նոր սովորելիք տառերը ոչ թէ հատ համապարերի հետ են կապւած մնում, այլ իրենց ծանօթ իրերի և երեսյթների հետ: \*)

Ա. Ակզբնական վարժութիւնների մէջ խուսափել ենք այն բառերից, որոնց մէջ երկու անգամ աւել բաղաձաւներ միասին կան, որպէսզի բառերը հեշտ կարգացւեն և «ը» տառի գործածութիւնը բաղաձայների մէջ շուտ տռաջ չփայ. «ը» տառով վանկերը յետացրած է մինչև Վ աստիճանը, երբ մանուկներն արգէն բարձրական վարժւած են կարգալու մէջ. եթէ նախապատրաստական վարժութիւնները լաւ են տարւած, այն ժամանակ բառերի մէջ լուսող «ը» տառի հետ հեշտ կը լինի գործ ունենալ:

\*) Պատկերների տակ տպւած նախադասութիւնները ուսուցչի համար են: Ուսուի օրինակելի բառն անցնելուց առաջ դասատիւն պէտք է խօսակցութեան նիւթ զարձնէ պլոտկերը և զրանից երեխաները պիտի զուրս բերեն պատկերի էութիւնն արտայայտող նախադասութիւնը. այսուհետեւ մանուկների ուշողը թիւնը պէտք է հրատիրէ օրինակելի բառի վրայ, որի օգնութեամբ սովորելու հու նոր տառը:

Վերջին ժամանակներում էքսպերիմենտալ մանկավարժութեանը նորից դրական կերպով ցոյց տւեց, որ մանուկներին սկզբում գրել-կարդալ սովորեցնելու բնական և ուղիղ ճանապարհն է վերլուծական և համագրական միթոդների միաւորութիւնը և ոչ թէ առանց գրան միանգամբից կարգալուն անցնել։ Դրա համար մենք այդ ուղղութիւնը ոչ միայն բանաւոր նախապատրաստական վարժութիւնների մէջ ընդունել ենք, այլ և այդ գործադրեր ինք մինչեւ Ա աստիճանը։ Սրանով յիտագայ բազմավանկ բառերի գրել-կարդալը զիւրանում է և մանուկն ինքնուրոյն զիւրով հնարաւորութիւն կունենայ դժւարացած դէպքերում բառերը վերլուծել, համարել և կարդալ։ Այս կերպ կարգացած իւրաքանչիւր բառ կամ նախադասութիւն պէտք է բառ առ բառ կարդալ, ապա նոյնը պարզ և առողմանութեամբ։

Այսքինարանի և ընթերցարանի մէջ նպատակով խուսափել ենք առածներից և դա էլ նրա համար, որովհետև շատ առածների բացարութիւնները բարդ են Ա. տարւայ մանուկների համար. միւս կողմից շատանգամ մի գաւառի առածները միւսի համար անհասկանալի են։ Առածներ գործածեն այս տարում թողնում է ուսուցչին, որ յարմարաւոր դէպքում օգտի տեղական պարզ առածներից։

Օրինակելի տառերը դուրս ենք բերել բառերի առաջին տառից. և միայն մի երկու դէպքում վերջին, Մեր համոզմանքն է և փորձերն էլ այն են ցոյց տւել, որ սուածին տառն ամենից չուտ լւսում է, ամենից պարզ ականջին զարկում, հետեալէս ամենից արտգ ըմբռն լի Ե՞ քան վերջին, մանաւանդ միջից գուրս բերած տառելը։ Վերջին դէպքում ոչ միտքն պարզութիւնը կորչում է, այլ և այդ տառի նշխւնը հասկացնելու համար պէտք է կամ բաւական դժւարութիւնների մէջ ընկնել և վերլուծելով հասկացնել և կամ մանկավարժական միջոցները թողած միանգամբից տառի անունն ասել, այնպէս որ օրինակելի բառը միայն ձեր համար զրւած կը լինի։ Այս տեղ ուսուցիչն իր միջոցով է ճանապարհ բաց անում և ոչ թէ դասադիրքն է այդ տարիս։

Ա. Ուսուցիչներին և աշակերտներին դիւրութիւն տալու համար իւրաքանչիւր դասում մի տառ է նշանակած և բոլոր անցած տառերն իւրաքանչիւր դասի մէջ կը կնուում են։

Փոքր ի շատէ փորձւած դասատուն չի կարող չվկայել, որ մի ժամում մի տառից աւելի անկարելի է անցնել, նամանաւանդ սկզբնական շընանում։ Մանուկները պէտք է այդ տառն ըմբռնեն, գրեն, վարժութիւնների մէջ

գործադրեն և իւրացն են, դրա համար էլ դժւար է մի տառից աւել անցնել։ Մի ժամում մի քանի տառ անցնելն ոչ միայն տանջանք է մանկան համար, այլ և նա անկարող է իշղողութեան մէջ պահել, ուսուցիչը ստիպւած կրկին պէտք դիմէ անցած վարժութիւններին։ Այս ամենը մենք ան ձնական փորձերից անսել ենք, դրա համար էլ խուսափել ենք այնպիսի դժւարութիւններից և մեր «կարծիքով հեշտացրած և մանկավարժական պահանջների համաձայն զասագիրը ենք առաջարկում»։ Թէ որչափ ենք հասկ մեր ցանկացած նպատակին, բարեխիղմ գործադրողների վորձերն ու կարծիքները ցոյց կը տան, որոնց նկատողութիւնները սիրով ու չնորդակալութեամբ կը նդունենք։ Դասընկերի այն ջերմ ընդունելութիւնը և տարածւելը, որ մեր դասատուների կողմից ընդունեց, արդէն մեր ասածներին ապացոյց է։

Մանկավարժական որոշ պահանջների հիման վրայ՝ անցած նիւթն աւելի և կատարելալիս խրացնելուն խիստ նպաստում է, եթե մանուկը նոյնը նկարում է, անցած նիւթը մօտը շարժումների միջոցով իր հոգու մէջ կրկնելով՝ ամբողջացնում և լրիւ պատկեր է կազմում։

Այդ հիման վրայ՝ Դասընկեր առաջին տարում (ինչպէս և Բ. Գ. տարիներում) յօդւածների տակ գրւած են մանկանը լու ծանօթ անհրաժեշտ առարկաների պատկերները շատ պարզ գծերով։ Այդ պատկերները ոչ թէ արտանկարելու համար են, այլ նրանք պէտք է նպաստեն մի կողմից նիւթի վերարտադրութեանը, որ կրկնելով ու նկարւելով մի ամրողնութիւն կազմեն մանկան հոգու մէջ, միւս կողմից նկարւելիք իրերը լու գիտելուց յետոյ՝ պէտք է պատկերները համեմատեն իրականի հետ և յիշողութեամբ նկարեն։

Բնականաբար շրջապատ ընտանեկան կարասինելը, մրգեր, կենդանիներ իրենց պարզութեամբ ու աստիճանական զարգացմամբ մանկան համար խիստ հետաքրքիր նկարելու նիւթ կը զառնան և որոշ շափով շահեկան կը լինան գծագրական նկարչութեանը,

Տ1. Մի երկու խօսք ես, թէ մեր գասագորի իւրաքանչիւր մասին բանի ժամ պէտք է նիւթել։ Հիմնելով մեր փորձերի վրայ, կասենք. ա) մօտ 20 ժամ պէտք է տալ նախապատրաստական վարժութիւններին (զրուցատրութիւն, վերլուծութիւն և գրւաթիւն). բ) իւրաքանչիւր դասում մի տառ անցնելով, գ0 վարժութիւններին պէտք է տալ 40 ժամ. իսկ նրանց վերաբերեալ յօդւածներին 15 և 5 դաս մանրատառ տպագրին. ընդամենը 80-դաս. ներկայ ծրագրի համաձայն շաբաթական 7 ժամ հոշեւելու, մինչեւ նոյն 118

քերի վերջը կանցնեն բոլոր ձեռագիր եւ սպազիր տառերն իրենց վարժուքին ներավ։  
Այսպէս աշնան վերջին մանուկները վերջացրած կը լինեն ոչ միտին բոլոր  
տառերը, այլ և աշնան մասին զանողական գաղափար կունհեան և նրան վե-  
րաբերեալ պատմութիւններից միքանիսը բանաւոր անցած կը լինեն։  
Դեկտեմբերի գասերը պէտք է նւիրել շրջապատից վեր առած աշնան մի-  
քանի յօդւածների ընթերց ոնութեան։ Յունւարից զենական կերպով պիտի  
սկսել ձմրան յօդւածները, գարնանը՝ գարնան յօդւածները, իսկ վերջերում  
գաղափար տալ ամառայ մասին։

1916 թ.  
Երևան

Կազմողներ

## Ա Ս Ի Շ Ա Ն Ե Բ

1.

(Երես 2)

Ա. սիւնեակ. Ուղարկայեաց ու հորիզոնական գծեր եւ նրանց  
միաւորումը.

Այս սիւնեակում (ինչպէս և հետեւալներում, պատահող ձևերը)  
նախ պէտք է գործնական կերպով հասկանալի դարձնել երեխանե-  
րին և ապա նկատել տալ առաջարկելով.

Բռնեցէք ձեր քանոնները, մատիտները, գրչակոթերը ուղղա-  
հայեաց։

Ցոյց տւէք դասարանի մէջ ուղղահայեաց գծեր (սեղանի, լու-  
սամուտի, պատի վրայ և այլն)։

Նկարեցէք ուղղահայեաց գծեր։

Բռնեցէք ձեր մատիտները, գրչակոթերը, մատները հորիզոնա-  
կան։ ցոյց տւէք դասարանի մէջ նոյն տեսակ գծեր։

Նկարեցէք հորիզոնական գծեր, խաչ, գրատախտակ, լուսամուտ,  
նստարան, սեղան, կանգնած ու պառկած սանդուղք և պատ։

Բ. սիւնեակ. թիվ գծեր։

Բռնեցէք ձեր մատիտները, քանոնները, գրչակոթերը թեք։

Նկարեցէք թեք գծեր՝ աջից դէպի ձախ, ձախից դէպի աջ՝  
խաչ, աթոռ, աստղ, ծառ, ծաղկաման, նամակ, տնակ, քանոն։

Գ. սիւնեակ. կոր գծեր։

Նկարեցէք օղակ, անիւ, կեռաս, խնձոր, կանգնեցրած ձռւ։

VIII.

Զեռագիր և տպագիր մեծատառեր:

IX.

Ընդհանուր յօդւածներ:

Դ. սիւնեակ. տառերի նիմնական զծերը.

Նկարեցէք կարթ՝ միուր վրան, միայն կարթ՝ փոքր ու մեծ,  
երկու դլխանի կարթ:

Միացրէք մի կարթը մէկ ուղղահայեցի հետ:

> ուղղահայեցը՝ վերեից կարթ ունեցող զծին:

> մի կարթ ուղղահայեց զծի և վերեից կարթ ունեցող մէկ ուրիշ զծի հետ:

Նկարեցէք մի ուղղահայեց և ներքեից սրան միացնող մէկ հորիզոնական զիծ:

Նկարեցէք միևնույնը աւելի մեծ:

> ուղղահայեց զիծ՝ ներքել ձւաձև:

> ձեռնափայտ:

II.

Զբուցատրութեան նիւթ է դասնալու Յ-րդ երեսում եղած  
ընդհանուր պատկերը այն ձեռվ, ինչ ձեռվ վերեւմ նկարագրւեց:

III

Մէկ և երկու վանկի բառերը գրել-կարդար:

IV.

Երկու և երեք վանկի բառերը գրել-կարդար:

V.

Երկու բաղաձայնը վանկել «ը» տառով՝ առանց «ը»-ի գրելու:

VI.

Բազմավանկ բառեր և վանկերի չբաժանւած յօդւածներ:

VII.

Տպագիր փոքրատառեր:

# ՅԱՆԿ

ՆԱԽԱԲԱՆ

## Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Գրութեան նախավարժութիւն.	2
Բնգանուր պատկեր Ա.	3
Կրկնողական պատկերներ անցած տառերի սահմանում Ա.	12
Բնդանուր պատկեր Բ.	13
1 Վարսիկի կատուն	15
2 Արև, արե, սան, ժողովրդ.	
(Բ. Հայկ.)	16
3 Օրօր, սառ	17
4 Սրտոտ գորար	19
5 Դանդահ, մանկիկ, սառ, ժողվրդ.	
(Ազգ. Հ)	20
6 Իմաստուն կովը	20
7 Թօն արաւ, ստան ժողովրդ.	22
8 Ցոլակի ակնոցը	23
9 Ես ունիմ	25
10 Արլոր	26
11 Միրելի Շուշիկ	28
12 Մէկը գալիս է մօլի մօտ	30
Կրկնողական պատկեր անցած տառերի սահմանում Բ.	32—33
13 Զալը լիքը ցորեն	34
 Բ Ե Թ Ե Բ Յ Ա Ր Ա Ն	
1.	
1 Գիրք, ստան.	
2 Ո՞վ է հփում	54
3 Ռուզանը	55
4 Խողիկը	57
5 Աշուն	58
6 Աշուն, սառ, Պ. Մոճուսեան	59
7 Առւրիկի փիսիկը	60
8 Նոյեմբերին, սառ, ձեռագիր, Հ. Հայրապետեան	61
 II.	
9 Ջմեռ	62
10 Աշնան տերելը, սառ, ձեռագիր,	
Հ. Հայրապետեան	63
11 Մասների խաղը, ժողովրդ.	63
12 Նոր տարի, ստան, Պ. Քաթ.	65
13 Զին և ճնճղուկը, ստան.	66
14 Ծոյլ Խաչիկը	67
15 Զմեռւայ գալը, սառ.	68
16 Զմեռւայ գւարճութիւն.	69
17 Զնէ մարդ, ստան.	71
 III.	
18 Գարուն	72
19 Գարնան գալը, ստան.	72
20 Հարաւէր գարնան, ստանաւոր,	
Պ. Մոճուսեան	73
21 Արտուրիկ, ստան, ձեռագիր,	
Հ. Հայրապետեան	74
22 Կլորիկ, թմբլիկ, ստան.	74
23 Բալենու հիւրերը.	75
24 Ծիտն ու տղան, ստան.	75
25 Բկիկ Պետիկը	76
26 Էդ մի կարծիր	76
27 Սերմիկը, սառ.	77
 IV.	
28 Մէկ, երկու.	77
29 Պարտէզում	78
30 Ծիտիկ, ստան.	79
31 Մկան զարմանքը	79
32 Նազիկ տատի խաղը, ժողովր.	80
33 Էս հս եմ, բա էն ով է.	80
34 Մայիսին, սառ, Ե. Բարայեան	82
35 Լաւ ընկեր, սառ, ձեռագիր, Հ.	
Հայրապետեան.	83
36 Երեք թիթեռնիկ.	83
37 Խատուտիկ, պուտապուտիկ	86
38 Երկու քաջեր, սառ.	86
39 Արտօւտի բունը.	87
40 Աղան ու մշակը.	88
41 Ծիծեռնակի բունը, փոխադր.	89
42 Ծիծեռնակ, ստան, ձեռագիր,	
Դողոխեան	90
43 Ծիտիկները, սառ.	90
44 Զանկօ Պանկօ, ժողովրդ, մի մասը ձեռագիր (Հայկ. կենդ. վէպեր)	91
45 Մկնիկ աղան, Հ. Հայրապետ.	95
46 Փոքրիկը, ստան.	97
47 Կառապան, ստան.	97
48 Հպարտ աքլորը, ստան.	98
49 Պոչատ կաչաղակը, ժողովրդ.	
(Վան. սազ)	99
 V.	
50 Ամառ	101
51 Ամառ, սառ, մի մասը ձեռագիր,	
Մ. Մամիկօնեան	102
52 Զմբուխտ եղնակ, սառ, Յարութ.	
Թումանեան	103

4 Խողիկը	57
5 Աշուն	58
6 Աշուն, սառ, Պ. Մոճուսեան	59
7 Առւրիկի փիսիկը	60
8 Նոյեմբերին, սառ, ձեռագիր, Հ. Հայրապետեան	61
 II.	
9 Ջմեռ	62
10 Աշնան տերելը, սառ, ձեռագիր,	
Հ. Հայրապետեան	63
11 Մասների խաղը, ժողովրդ.	63
12 Նոր տարի, ստան, Պ. Քաթ.	65
13 Զին և ճնճղուկը, ստան.	66
14 Ծոյլ Խաչիկը	67
15 Զմեռւայ գալը, սառ.	68
16 Զմեռւայ գւարճութիւն.	69
17 Զնէ մարդ, ստան.	71
 III.	
18 Գարուն	72
19 Գարնան գալը, ստան.	72
20 Հարաւէր գարնան, ստանաւոր,	
Պ. Մոճուսեան	73
21 Արտուրիկ, ստան, ձեռագիր,	
Հ. Հայրապետեան	74
22 Կլորիկ, թմբլիկ, ստան.	74
23 Բալենու հիւրերը.	75
24 Ծիտն ու տղան, ստան.	75
25 Բկիկ Պետիկը	76
26 Էդ մի կարծիր	76
27 Սերմիկը, սառ.	77
 IV.	
28 Մէկ, երկու.	77
29 Պարտէզում	78
30 Ծիտիկ, ստան.	79
31 Մկան զարմանքը	79
32 Նազիկ տատի խաղը, ժողովր.	80
33 Էս հս եմ, բա էն ով է.	80
34 Մայիսին, սառ, Ե. Բարայեան	82
35 Լաւ ընկեր, սառ, ձեռագիր, Հ.	
Հայրապետեան.	83
36 Երեք թիթեռնիկ.	83
37 Խատուտիկ, պուտապուտիկ	86
38 Երկու քաջեր, սառ.	86
39 Արտօւտի բունը.	87
40 Աղան ու մշակը.	88
41 Ծիծեռնակի բունը, փոխադր.	89
42 Ծիծեռնակ, ստան, ձեռագիր,	
Դողոխեան	90
43 Ծիտիկները, սառ.	90
44 Զանկօ Պանկօ, ժողովրդ, մի մասը ձեռագիր (Հայկ. կենդ. վէպեր)	91
45 Մկնիկ աղան, Հ. Հայրապետ.	95
46 Փոքրիկը, ստան.	97
47 Կառապան, ստան.	97
48 Հպարտ աքլորը, ստան.	98
49 Պոչատ կաչաղակը, ժողովրդ.	
(Վան. սազ)	99
 V.	
50 Ամառ	101
51 Ամառ, սառ, մի մասը ձեռագիր,	
Մ. Մամիկօնեան	102
52 Զմբուխտ եղնակ, սառ, Յարութ.	
Թումանեան	103

53. Արագիլի սէրը.	. . . . .	103	Հանելուկներ
54. Զզիկ, ժողովրդ. (Հայկ, կենդ. վէպեր)	. . . . .	104	1. (Ուլիկ ուլիկ) . . . . . Նուռ 8
55. Պատիկն ու լիտիկը, ստ. Յար. Թուժանհան	. . . . .	106	2. . . . . Վիրք 60
56. Երեխաներն անտառում	. . . . .	107	3. . . . . Մոմ 62
			4. . . . . Զզիկ 106
			Նախաբան . . . . . 110
			Համառօտ բացտարութիւն գոր- ծագրողներին . . . . . 111

---

Champawat  
Kathmandu  
Afghanistan  
Sikkim  
Himalayan

Opposite Entomology.

ԴԱՍԸՆԿԵՐ

Առաջին տարի  
Երկրորդ տարի  
Երրորդ տարի  
Չորրորդ տարի

Պատրաստէ, շաւուզ՝ տպագրութեան կո յան  
նւի Դամընկեր Ե. և Զ. տարի:

Կազմովների հասցէն՝ Երևան Գայիանեան

Գլուխ:

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



MAL010627

